

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ինչու Մաս Չենք Կազմեր

Վերջերս յայտարարուեցաւ համայնքէն ներս նոր մարմինի մը կազմութեան մասին՝ «Արեւմտեան Ամերիկայի Համահայկական Խորհուրդ» անուան տակ: Շատեր նկատեցին, թէ այդ Խորհուրդին միացած աւելի քան քսան կազմակերպութիւններուն մէջ չկայ Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան անունը: Յայտարարութեան հրատարակումէն ասդին բազմաթիւ հարցադրումներ եղան Կուսակցութեան ներկայացուցիչներուն, թէ ինչո՞ւ ՍԴՀԿ մաս չի կազմեր այդ Խորհուրդին: Մեր ժողովուրդը միշտ ալ ոգեւորուած է միասնականութեան երելոյքներու ի տես եւ այս իմաստով մեր բացակայութեան մասին մտահոգութիւնները կը նկատենք բնական ու տեղին:

Լոս Անճելըսահայ համայնքէն ներս վերջին տարիներուն կազմուած են ու կը գործեն բազմաթիւ միացեալ մարմիններ, ուր համախմբուած են Խորհուրդին մաս կազմող գրեթէ բոլոր կազմակերպութիւններ, իրենց անմիջական մասնակցութեամբ եւ կամ զիրենք հովանաւորող կուսակցութիւններուն միջոցաւ: Այստեղ կը գործէ Հայկական Ցեղասպանութեան տարելիցները նշող միացեալ մարմինը, նոյն կազմակերպութիւնները մէկ սեղանի շուրջ նստած են Հայ Ամերիկեան Թանգարանի ծրագիրը իրագործելու նպատակով, նոյնպէս Հայաստան Հիմնադրամի վարչութեան ներս: Ասոնց կողքին կայ նաեւ Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոսութիւնը, որ տարբեր առիթներով եւ յատուկ ծրագիրներ իրականացնելու նպատակով կը հրաւիրէ մեր բոլոր կազմակերպութիւններ: Ասոր մէկ օրինակն է այս օրերուն ընթացող ժողովներն են՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Սեպտեմբեր 22-23-ին Լոս Անճելըս կատարելիք պատմական այցելութիւնը բարձր մակարդակով կազմակերպելու եւ յաջողութեամբ իրագործելու նպատակով:

ՍԴՀԿ-ի ներկայացուցիչները մասնակցելով խորհրդակցական առաջին ժողովին, անբաւարար գտան նման մնայուն մարմինի մը կազմութեան անհրաժեշտութեան մասին հնչած կարծիքները: Նոյնպէս, մեզի համար յստակ չէր անոր գործունէութեան դաշտը, նպատակն ու առաքելութիւնը: Ընդհակառակը, մենք նկատեցինք, որ կար նախապէս պատրաստուած ծրագիր ու ձգտում ամբողջ համայնքի ղեկավարութիւնը ստանձնելու ուղղութեամբ: Որպէս 132 տարուայ պատմութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւն, ՍԴՀԿ չի կրնար իր ինքնուրոյնութիւնը զիջիլ որեւէ այլ կազմակերպութեան եւ կամ անհատներու, ըլլան անոնք եկեղեցական կամ կուսակցական:

Չափազանց Դառնացած Եմ Այն Իրավիճակով, որ Ժառանգած Եմ Լեռնային Ղարաբաղի Հարցով. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Օգոստոս 27-ին ելոյթ ունեցաւ Հայաստանի դեսպաններու եւ դիւանագիտական գերատեսչութիւններու ղեկավարներու համաժողովին, որու ընթացքին յայտարարեց որ, Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ շատ բան փոխուած է ու կարեւոր դիտարկումներ կատարեց Ղարաբաղեան հարցի կարգաւորման գործընթացի մասին:

«Չափազանց դառնացած եմ այն իրավիճակով, որով, որպէս վարչապետ, ժառանգել եմ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման բանակցային գործընթացը եւ ընդհանրապէս Ղարաբաղի հարցի միջազգային ընկալումը», - յայտարարեց Փաշինեան:

Վարչապետը յատկապէս զարմացած է, որ միջազգային շրջանակներու մօտ Աբխազիոյ, Հարաւային Օսեթիայի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնները շատ յաճախ նոյն ձեւով կ'ընկալուին՝ «Երբ մենք յստակ արձանագրում ենք, որ, ասեմք, Հարաւային Օսիայի, Աբխազիոյ բնակիչները նոյնիսկ այսօր կարող են հանգիստ այցելել Վրաստանի



Նիկոլ Փաշինեան եւ Ջոհրապ Մնացականեան դեսպաններու եւ դիւանագետներու հետ հանդիպումի ընթացքին

մայրաքաղաք Թիֆլիս եւ այնտեղի շուկայում վաճառել իրենց արտադրած գիւղամթերքը, գնել իրենց անհրաժեշտ ապրանքները եւ ետ վերադառնալ Աբխազիա կամ Հարաւային Օսեթիա, իսկ Ռուսաստանի քաղաքացուն Պաքուի օդակայանից ետ են ուղարկում՝ միայն

այն պատճառով, որ նա հայկական ազգանուն ունի, երբեմն սա աւելի ամբողջական պատկերացում է տալիս Ղարաբաղի հարցի էութեան մասին, քան նոյնիսկ մի քանի ժամանոց դասախօսութիւնը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ընդունած Է Լիբանանի ՍԴՀԿ «Սարգիս Տիրումի» Երիտասարդական Միութեան Անդամները



ՍԴՀԿ «Սարգիս Տիրումի» երիտասարդական միութեան անդամները Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ

Օգոստոս 25-ին Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մալթ Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունած է Լիբանանի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տիրումի» ուսանողական-երիտասարդական միութեան 35 անդամներ, որոնք ուխտաւորաբար եկած են այցելելու Հայաստան եւ Արցախ:

Միութեան ատենապետ Տիգրան Միհրանեանը շնորհակալու-

թիւն յայտնած է Նորին Սրբութեան հայրական օրհնութեան համար՝ պատրաստակամութիւն յայտնելով մշտապէս օգտակար ըլլալու Հայաստանին եւ Արցախին: Տ. Միհրանեանը միութեան անունով նաեւ բարեմաղթանքներ յղած է Վեհափառ Հայրապետին ծննդեան տարեդարձի կապակցութեամբ:

Անունհետեւ Ամենայն Հայոց

Կարօ Փայլանի Խիստ Պատասխանը Սարգար Եսայեանին

Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր, իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան (AKP) ներակայացուցիչ Մարգար Եսայեան իշխանամէտ «Aksam»-ին մէջ յօդուած հրատարակած է: Եսայեանը, անդրադառնալով ընդդիմադիր քրտամէտ ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան (HDP) հայ պատգամաւոր Կարօ Փայլանի եւ նոյն կուսակցութեան պատգամաւոր Էպրու Կիւնալի՝ Լատինական Ամերիկա կատարած այցին, գրած է.

«Երկու HDP-ական պատգամաւոր շրջագայութեան ելած են Հարաւային Ամերիկայի մէջ: Միջազգային ուժերէն խնդրած են միջամտել Թուրքիոյ գործերուն:

Երկիր առ երկիր, խորհրդարան առ խորհրդարան շրջելու եւ միջազգային ուժերէն Թուրքիոյ գործերուն միջամտել խնդրելու անոնց այս վարքագիծը ինձ ժամանակի մեքենայով տեղափոխեց նախորդ դարասկիզբ: Քիւրտիստանի Բանուորական Կուսակցութիւնը (PKK) եւ HDP-ն Դաշնակցականներէն ու Հնչակեաններէն աւելին են, բայց պակաս չեն», - գրած է իշխանական պատգամաւորը՝ նշուած ուժերու գործունէութիւնը որակելով որպէս «քաղաքական մու-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

**Որոշումն Անձամբ
Նիկոլ Փաշինեանն է Կայացնելու
Ոչ Ոք Չի Ուզում Կիսել**

ՆԱՅԻՐԱ ԳԱՅՐՈՒՄԵԱՆ

Հայաստանի Քննչական կոմիտեն նորից յայտարարել է, որ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման դեպքում բնապահպանական ռիսկերը կառավարելի են, եւ ջրի ու օդի վրայ ազդեցությունը հակառակ է լինելու:

Շրջակայ միջավայրի նախարարութիւնը դեռ չի հրապարակել իր եզրակացությունը, թէ արդեօք անհրաժեշտ է նոր փորձաքննություն: Շրջակայ միջավայրի նախարարութիւնը լուր է հնարաւոր է, որովհետեւ բանն ամենեւին էլ բնապահպանութիւնը չէ: Նախարարութիւնն արդէն տուել է իր եզրակացությունը՝ Լիդիան ընկերությունն Ամուլսարի շահագործման իրաւունք տալով:

Հիմա, եթէ հետ վերցնի թոյլտուութիւնը, ապա, փաստացի, իր վրայ կը վերցնի խոշորագոյն ներդրումային նախագծի չեղարկման քաղաքական պատասխանատուութիւնը:

Ընդհանրապէս, Ամուլսարի գործով պատասխանատուութիւնն առանցքային հասկացութիւն է: Խորհրդարանի փոխխօսնակ Ալեն Սիմոնեանը, օրինակ, բաց տեքստով ասում է, որ խորհրդարանը չի քուէարկելու այդ հարցով, այնպէս որ, իշխող խմբակցությունում ոչ մի պառակտում չկայ, չնայած կարծիքները բախում կայ:

Խորհրդարանը, փաստացի, չի մասնակցում որոշումների կայացմանը, իսկ Շրջակայ միջավայրի նախարարութիւնը մտադիր չէ փոխել իր որոշումը, որովհետեւ խօսքը ոչ թէ շահագործման թոյլտուութիւն տալու, այլ այդ թոյլտու-

թեան յետկանչման մասին է: Իսկ հետ վերցնելու համար անհրաժեշտ են շատ ծանրակշիռ հիմքեր, որոնք նախարարութիւնը չունի:

Նախագահ Արմէն Սարգսեանը, ով նախկինում եղել է Լիդիանի տնօրէնների խորհրդի կազմում, չի յայտնում իր կարծիքը եւ միայն պատրաստ է խորհուրդ տալ, եթէ պէտք լինի:

Ստացւում է, որ Ամուլսարի հարցով միանձնեայ որոշում պէտք է կայացնի Նիկոլ Փաշինեանը, եւ ցանկացած որոշման ողջ պատասխանատուութիւնը նրա վրայ է ընկնելու: Քանի որ լուծումներն այնքան էլ շատ չեն, ցանկացած ելք ի սկզբանէ պարտուած է Փաշինեանի համար: Ամուլսարի շահագործման թոյլտուութիւնը հետ չվերցնելու որոշումը կը յանգեցնի բնապահպանների ու Ջերմուկի բնակիչներին դէմ ուժային գործողութեան անհրաժեշտութեան: Որոշումը հետ չվերցնելն էլ յղի է բազմամիլիոնանոց միջազգային արբիտրաժով եւ որոշ արեւմտեան շրջանակների հետ յարաբերությունների վատթարացմամբ:

Ոչ ոք չի ցանկանում պատասխանատուութիւն վերցնել կարեւոր քաղաքական որոշման համար: Այդ թուում, այն պատճառով, որ Հայաստանում չի գործում պատասխանատուութիւնը կիսելու մեխանիզմը: Սահմանադրությունը նախատեսում է միայն իշխանութեան տարանջատում՝ շրջանցելով պատասխանատուութիւնը: Որովհետեւ պատասխանատուութիւնը պատիժ է նախատեսում: Իսկ Հայաստանում իշխանութեանը պատիժ չի ենթադրում:

«ԼՐԱԳԻՐ»

**Բնապահպանական Շարժումներն
Օգտակար են**

ԱՐԱՄ ԱՐԻՍՏԱՄԵԱՆ

Այն, ինչ այժմ կատարւում է Ամուլսարի հանքի շուրջ, իմ կարծիքով, ընդհանուր առմամբ, առողջ գործընթաց է: Ժողովրդավարական երկրներում բնապահպանները բողոքում են իրենց եւ ոչ միայն իրենց կառավարութիւնների, կորպորացիաների դէմ: Բոլորս տեսել ենք, թէ ինչպէս է, մասնաւորապէս, «Գրինփիսը» փոքրիկ մակոչկներով տարբեր տեսակի ակցիաներ իրականացնում՝ փորձելով փակել, օրինակ, հսկայական ձկնորսական նաւերի ճանապարհը: Պետութիւնները եւ կառավարութիւնները բնակցում են բնապահպանների հետ ու փորձում են գտնել փոխադարձաբար ընդունելի լուծումներ: Բնապահպաններն, իհարկէ, մշտապէս շահագանցում են վտանգը ու, տազնապ հնչեցնելով, «աղետալի հետեւանքներ» են կանխատեսում: Օրինակ, «Եթէ այս նաւթային տանկերը դուրս գան ովկիանոս, շրջակայ ամբողջ Ֆլորանս եւ Ֆառնանս ոչնչանալու է»: Ուրիշ հարց, որ լրագրողները, լրատուամիջոցները չպիտի հալած իւրի տեղ դնեն «աղէտի» եւ «կործանման» մասին յուզական բացականչությունները, մանաւանդ՝ իրենք էլ չսկսեն նոյն ոգով բացականչել:

Հակառակ դէպքում նրանք դառնում են իրադարձութեան մասնակից, կողմ՝ ոչ թէ լուսաբանող: Մենք պէտք է սովորենք բնապահպանական պայքարի նշուած ձեւերին՝ դրանք ժողովրդավարական հասարակութեան անբաժանելի մասն են: Պէտք է նաեւ պատրաստ լինենք, որ քաղաքական ուժերի մի մասը կը փորձի քաղաքական դիվիդենդներ շահել այդ պայքարի վրայ:

Մի մասն էլ ունի, այսպէս ասած, «կանաչ» կողմնորոշում: Հայաստանում քաղաքական երփներանգի այդ հատուածին է, կարծես թէ, հաւակնում «Քաղաքացու

որոշում» կուսակցությունը:

Շատ բնական էմ համարում, որ երիտասարդ քաղաքական եւ հասարակական գործիչներն իրենց կարիերան կառուցում են «կանաչ թեմայի» վրայ, որը «թրենդային» է Արեւմտեան Եւրոպայում: Իհարկէ, անխուսափելի է նաեւ, որ այդ կամ այն կորպորացիայի դէմ բողոքողների մի մասը համագործակցում է մրցակից կորպորացիայի հետ, ինչի մասին, ի դէպ, իր խօսքում նրբօրէն ակնարկում էր Հայաստանի վարչապետը: Ոչ մի երկրում, ոչ մի հասարակական շարժում 100 տոկոսանոց «խտհալիստական» բնույթ չի կրում: Բայց ընդհանուր առմամբ բնապահպանական շարժումների կորիզն, ինձ թւում է, մաքուր է:

Բնապահպանները զարգացած երկրներում պահանջում են առաւելագոյնը, ստանում են իրենց պահանջածի, ասենք, 20 տոկոսը: Եթէ չպահանջեն, կառավարություններն այդ 20 տոկոսն էլ չեն անի:

Վերջին շաբաթների իրադարձությունները դաս պիտի լինեն թէ՛ այս եւ թէ՛ յաջորդ կառավարությունների համար, որ նրանք 100 անգամ մտածեն՝ նոր հանք բացելուց առաջ:

Արդեօք այսօրուայ կառավարութիւնը «տարբերակ ունի» այս մէկի աշխատանքները դադարեցնելու, եւ չգիտեմ: Այստեղ բնապահպանական յոյզերը եւ բացականչությունները քիչ են, անհրաժեշտ է չոր, սառնասիրտ հաշուարկ: Ինչ-որ բարի է, այդ էլ թող կատարուի:

«ԱՌԱԻՕՏ»

**Հրայր Թովմասեանին
«Չեզոքացնելու» Միջոցը Գտնուել է**

Օգոստոսի 22-ին Ոստիկանութիւնը հաղորդագրութիւն է տարածել, որ արդարադատութեան նախարարութեան նախկին բարձրաստիճան պաշտօնեան զրկել է նոտարներին Երեւան քաղաքի սեփականութիւն հանդիսացող նոտարական գրասենեակների տարածքները տնօրինելու իրաւունքից: Արդէն իսկ շրջանառւում են տեղեկություններ, որ այդ բարձրաստիճան պաշտօնեան ՄԴ նախագահ Հրայր Թովմասեանն է, որը նշուած ժամանակահատուածում եղել է արդարադատութեան նախարար:

Բացի այդ, ուշագրաւ տեղեկություն տարածուեց երեկ: Ազգային ժողովում աշխատակազմի դեկավարի հրամանով իրականացուած գոյքագրման արդիւնքում պարզուել է, որ 54 անուն ապրանք տեղում չէ:

Մասնաւորապէս, կառուցից բացակայում է 22 համակարգիչ, երկու տերաբայթ տեղեկատուութեան ծաւալով 2 արտաքին կոշտ սկաւառակներ, 5 ինֆրակարմիր ընդունիչներ, այլ տեխնիկական միջոցներ եւ գոյք: Գոյքագրումն իրականացուել է Մարտ ամսին, բայց, չգիտես ինչու, քրէական գործը յարուցւում է նոր: Յիշեցնենք՝ ժամանակին ԱԺ աշխատակազմը ղեկավարել է հենց Հրայր

Թովմասեանը: Այս երկու՝ առաջին հայեացքից իրար հետ որեւէ առնչություն չունեցող տեղեկատուութեանը գումարենք այն հանգամանքը, որ ՄԴ մասին օրէնքի նոր նախագիծը ենթադրում է ՄԴ դատաւորի լիազորութիւնների աւտոմատ կասեցում՝ վերջինիս հանդէպ քրէական հետապնդում սկսելու դէպքում, ապա պատկերը ամբողջանում է:

Իշխանութիւնները գտել են Հրայր Թովմասեանից ազատուելու օրինական ճանապարհը:

Օգոստոսի 29-ին ՄԴ-ում մեկնարկում է Ռոբերտ Քոչարեանի գործի քննութիւնը, բացի այդ ՄԴ-ն սպասում է վեներտիկի յանձնաժողովի եզրակացութեանը, եւ հենց Հրայր Թովմասեանից է մեծամասամբ կախուած՝ կը յայտնուի երկորդ նախագահը ազատութեան մէջ, թէ ոչ: Ըստ հուլիսեան՝ իշխանութիւնները այսպէս փորձում են ազդեցութեան լծակ ստեղծել՝ ՄԴ նախագահի որոշման վրայ ազդե-


լու նպատակով: ՄԴ միւս դատաւորներից էլ իշխանութիւնները պատրաստուում են ազատուել վերջիններիս օրինական կաշառք առաջարկելով, սակայն արդէն իսկ պարզ է, որ ՄԴ դատաւորների մեծ մասը դէմ է խաղի այդ կանոններին: Իսկ ինչ կ'որոշի Հրայր Թովմասեանը, կը տրուի՝ սադրանքին՝ աչքի տակ ունենալով իշխանութիւնների կողմից կարուած միւս քրէական գործերը, թէ «կը խաղայ իր կանոններով՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ այդ կարուած գործերը ջուր էին...»

Թովմասեանի հաւանական կալանաւորումը միանգամից երկու խնդիր կը լուծի, նախ՝ հանրութեան ուշադրութիւնը կը շեղուի եւ մէկ աղմկայարուց ձերբակալութեամբ, եւ վերջապէս՝ Փաշինեանն ու իր թիմը հնարաւորութիւն կը ստանան ՄԴ նախագահի պաշտօնում տեսնել իրենց թեկնածուին:

«ԼՌԻՐԵՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massispost.com



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՋԱՊԱՐՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իսրայնական Պայմանագիրը Այս Տարի Պիտի Չքննարկուի

Խորհրդարանը ամենայն հավանականությամբ այս տարի պիտի չքննարկի «Իսրայնական պայմանագրի» վաւերացման հարցը: Արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեանը խորհրդարանէն ներս լրագրողներու հետ զրոյցի ժամանակ տեղեկացուցած է, որ դիմած են վենետիկի յանձնաժողով, որ իր կարծիքը պիտի յայտնէ Հոկտեմբերին, անկէ ետք կառավարութիւնը հարցը պէտք է քննարկէ եւ նոր միայն յետոյ ուղարկէ խորհրդարան՝ վաւերացման: Այնպէս որ, ըստ նախարարի, այս տարի իրատեսական չէ հարցի քննարկումը խորհրդարանի կողմէ: Ըստ նախարար Բաղասեանին, վենետիկի յանձնաժողովը պէտք է կարծիք յայտնէ պայմանագրի մէջ տարակարծութիւններու տեղիք տուած հարցերուն մասին:



Արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեան

Յիշեցնենք, «Կանանց նկատմամբ բռնութեան ու ընտանեկան բռնութեան կանխարգելման» Եւրոպայի խորհուրդի պայմանագրի շուրջ թէ՛ քննարկումներու ընթացքին մտահոգութիւններ կը հնչեն, որ փաստաթուղթի վաւերացումը թոյլ պիտի տայ, որպէսզի ընտանիք կազմեն նաեւ միասեռական անձինք, նախարարը ինքը, սակայն, նման վտանգ չի տեսներ:

«Էն դրոյթները, որոնք հիմնականում քննարկուել են ընտանիքի կազմին կարող է վերաբերուել, որը բացարձակ անհեթեթ է, որ ընտանիքի կազմ կարող է փոխուել: Եթէ հետաքրքիր է, նայէք վրաստանի Սահմանադրութիւնը, նայէք վրաստանը երբ է ստորագրել եւ երբ է վաւերացուել եւ արդեօք այդ վաւերացումից յետոյ որոշակի փոփոխութիւն կայ: Այնտեղ էլ ընտանիքը տղամարդու եւ կնոջ միութիւնն է, այնտեղ է պայմանագրի վաւերացումից յետոյ այդպէս մնացել, այդպէս է լինելու նաեւ Հայաստանում», - նշած է Բաղասեանը:

«Ազատութեան» հարցին, թէ ինչո՞ւ կը բացառէ, որ միասեռականները կրնան ամուսնանալ, ընտանիք կազմել, Բաղասեանը պատասխանած է. «Պետութիւնը չի ճանաչի, որովհետեւ այդ պայմանագրով որեւէ բան չի փոխուած, որպէսզի պետութիւնը ճանաչի նման ամուսնութիւնը, իսկ իրանք համատեղ կ'ապրեն, թէ չեն ապրի, դա իրենց գործն է»:

Հարցին ալ, թէ ինքը կը բացառէ, որ պայմանագիրը նման հնարաւորութիւն կրնայ տալ, նա-

խարարը արձագանգած է. Այո, միանշանակ բացառում եմ: Եթէ կառավարութիւնը վստահ է, որ այս պայմանագիրը քննարկուող խնդիրների վերաբերեալ որեւէ ռիսքեր չի պարունակում, վենետիկի յանձնաժողով դիմելը եւ խորհրդատուական կարծիք ստանալը յստակ նպատակ է հետապնդում, որպէսզի դա լրացուցիչ փաստարկ լինի եւ վստահութիւն ստեղծող հանգամանք լինի այս պայմանագրի, լրացուցիչ փաստարկի առումով, այո, որպէսզի հենց այն մարմինը, որը Եւրոպայի խորհրդի կազմում է, ինքը մեկնաբանի՝ արդեօք նման հնարաւորութիւններ առկայ են, թէ չէ, թէեւ կրկին ասում եմ՝ մենք վստահ ենք, որ ոչ, վրաստանի օրինակն էլ նայէք»:

Նախարարը չէ թաքցուցած՝ ինք անձամբ դէմ է միասեռականներու ամուսնութեանն ու անոնց կողմէ երեխաներու որդեգրման: Միեւնոյն ժամանակ Ռուստամ Բաղասեանը շեշտած է՝ պայմանագրի մէջ այդ մասին որեւէ դրոյթ չկայ: «Ազատութեան» դիտրկման, որ իրեն կը հակադարձեն, որ միեւնոյնն է կան օրէնքներ, որոնք արդէն իսկ կը կանխարգիլեն այդ բռնութիւնը, արդարադատութեան նախարարը պատասխանած է. «Փաստարկ-հակափաստարկներ դաշտում մենք հրապարակել ենք, նաեւ երբ որ արդէն կը լինի իմ ասած վերջնական քննարկումը, այդ փուլում»:

Հարցին ալ, Ազգային ժողովէն ներս քննարկումները յաջորդ տարի պիտի կայանայ, Բաղասեանը պատասխանած է. «Ես կարծում եմ, որ, այո»:

Ձերբակալուած է Պետական Եկամուտներու Կոմիտէի Նախկին Նախագահ Գագիկ Խաչատրեանը

ՀՀ Ելեւմուտքի նախկին նախարար, Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախկին նախագահ Գագիկ Խաչատրեանը եւ Կարէն Խաչատրեանը պաշտօնէական դիրքի չարաշահման եւ առանձնապէս խոշոր չափերով գոյքի վատնման կասկածանքով բերման ենթարկուած են ՀՀ ԱԱԾ քննչական բաժանմունք եւ ձերբակալուած: Այս մասին կը տեղեկացնէ Ազգային անվտանգութեան ծառայութեան պաշտօնական կայքէջը:



Ելեւմուտքի նախկին նախարար Գագիկ Խաչատրեան

Նշենք, որ Ազգային անվտանգութեան ծառայութեան քննչական բաժանմունքը խուզարկութիւն իրականացուցած է Գագիկ Խաչատրեանին պատկանող բնա-

կարանին, առանձնատան, տարածքներուն մէջ, ինչպէս նաեւ Գագիկ

Նիկոլ Փաշինեանը Տնտեսութեան Մասին Նոր Դրական Տուեալներ Հրապարակած Է

2019 թուականի առաջին կիսամեակի տուեալներով նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ Հայաստանի Հանրապետութեան մէջ.

- Մշակող արդիւնաբերութիւնը աճած է 8,7 տոկոսով:
 - Կացութեան եւ հանրային սնունդի կազմակերպման ոլորտը աճած է 33,8%-ով:
 - Օդային փոխադրամիջոցով ուղևորափոխադրումները աճած են 28,2%-ով:
 - Առևտուրի շրջանառութիւնը աճած է 8,9% ով:
- Այս տարուան Յունուար-Յուլիսին, նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ, տնտեսական աշխոյժութեան ցուցանիշը կազմած է 6,8 տոկոս: Յու-

լիսին այս տարուան Յունիսի համեմատ տնտեսական աշխոյժութիւնը աճած է 12,8 տոկոսով, կը տեղեկացնէ վիճակագրական կոմիտէն:

Յունուար-Յուլիսին արդիւնաբերական արտադրանքը աճած է 8,4, շինարարութեան ծաւալը՝ 4,5, առևտուրի շրջանառութիւնը՝ 8,9, ծառայութիւններու ծաւալը՝ 15,2 տոկոսով:

Միջին ամսական անուանական աշխատավարձը նոյն ժամանակահատուածին աճած է 5,9 տոկոսով:

Վերոնշեալ ժամանակահատուածին արտաքին առևտրաշրջանառութիւնը աճած է 2,3 տոկոսով: Այդ շարքին՝ 3,0 տոկոսով աճած են արտահանման, 1,9 տոկոսով՝ ներմուծման ծաւալները:

Աւարտած է Դաւիթ Սանասարեանի Գործով Նախաքննութիւնը

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մօտ աւարտած է Պետական վերահսկողական ծառայութեան պետ Դաւիթ Սանասարեանի գործով նախաքննութիւնը: Այս մասին «Ազատութեան» յայտնած է Սանասարեանի պաշտպան Ինեսսա Պետրոսեանը:

Փաստաբանը յայտնած է, որ Սանասարեանի մեղադրանքը մնացած է նոյնը, որոշ փոփոխութիւններ եղած են մեղադրանքի ձևակերպումներուն մէջ: Քրէական գործի նիւթերուն ծանօթանալու համար փաստաբանը 20 օր ժամանակ խնդրած է: Սանասարեանը բժշկական սարքերու գնումներու գործով կը մեղադրուի պաշտօնէական լիազօրութիւնները չարաշահելու մէջ:

Սանասարեանը կը հերքէ մեղադրանքը՝ պնդելով, որ ԱԱԾ-ն վատնելով պետական միջոցը այդպէս ալ առարկայական քննութիւն չէ իրականացուցած:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը մինչդեռ յայտարարած էր, որ բաւարար ապացոյցներ ձեռք բերուած են, որոնք առերեւոյթ կը վկայեն այն մասին, որ Սանասարեանը, հանդիսանալով Պետական վերահսկողական Ծառայութեան ղեկավար, ունենալով ծառայութեան անմիջական ղեկավարումը իրականացնելու, ծառայութեան աշխատակիցներ նշանակելու եւ ազատելու, վերահսկող կառուցներուն մէջ ուսումնասիրութիւններ իրականացնելու յանձնարարաբեր տալու լիազօրութիւններ, խմբային շահերէ ելլելով՝ իր աշխատակիցներու կողմէ



Պետական վերահսկողական ծառայութեան պետ Դաւիթ Սանասարեան

փաստացի կառավարող ընկերութեան ձեռնարկատիրական գործունէութեան նպաստելու նպատակով իր պաշտօնական դիրքը առերեւոյթ օգտագործած է ծառայութեան շահերուն հակառակ, ինչպէս նաեւ չէ կատարած իր ծառայողական պարտականութիւնները:

Սանասարեանի նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած էր չհեռանալու մասին ստորագրութիւնը:

35-ամեայ պաշտօնեան թաւշեայ յեղափոխութեան առանցքային մասնակիցներէն էր, քրէական գործի յարուցումէն ետք անոր լիազօրութիւնները դադարեցուած էին:

Խաչատրեանի հետ կապ ունեցող այլ անձանց տարածքներուն եւ առանձնատուներուն մէջ:

Ըստ ԱԱԾ հաղորդագրութեան, նախաքննութիւնը կը շարունակուի: Լրագրողներու հետ զրոյցի ժամանակ Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէն Արթուր Վանեցեանը յայտնած է, որ չի բացառուիր, որ մեղադրանքը լրացուի նաեւ այլ յօդուածներով: «Ազատութեան» հարցին, թէ որ թուականներուն կը վերաբերի քրէական գործը, ԱԱԾ տնօրէնը արձագանգած է. «Պաշտօնավարման ընթացքի մասին է խօսքը»:

Թէ ի՞նչ չափի գումարի մասին է խօսքը, Վանեցեանը պատաս-

խանած է. «Տասնեակ միլիոնաւոր տոլարներ»:

«Մեղադրանքը 72 ժամուան ընթացքին կ'ըլլայ, այսինքն բերման ենթարկուելէն ետք մենք ունինք 72 ժամ», - նշած է ԱԱԾ տնօրէնը:

Հարցին, թէ անոր հետ կապ ունեցող այլ անձինք ովքեր են, Վանեցեանը արձագանգած է. «Մէկ հոգիի անունը կրնամ ըսել՝ Կարէն Խաչատրեան»:

Վանեցեանը ընդգծած է, որ Կարէն Խաչատրեանն ալ բերման պիտի ենթարկուի՝ նշելով. «Քննչական բաժանմունք բերման ենթարկուած բոլոր անձանց կարգավիճակը քննիչները պիտի որոշեն»:

ԼՈՒՐԵՐ

Արտաքին Գործոց Նախարարը - Փաշինեան-Թրամփի Հանդիպումը Օրակարգի Վրայ է

Արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը կառավարութեան նիստին ետք լրագրողներու հետ զրոյցի ժամանակ անդրադարձած է վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ ԱՄՆ կատարելիք այցին: Հարցին, թէ ԱՄՆ նախագահի եւ դեկավարութեան հետ հանդիպում կը սպասուի, Մնացականեանը պատասխանած է. «Միացեալ Նահանգներու հետ մենք ունենք բաւական աքթիւ յարաբերութիւններ: Եղել են այցեր, շփումներ, մի հատ գնահատենք, ինչպէս են եղել շփումները եւ ինչ մակարդակի շփումներ են եղել: Թրամփի հետ հանդիպումների վերաբերեալ մենք թրամփի հետ հանդիպում չենք ունեցել, բայց դրանից մեր երկխօսութիւնը Միացեալ Նահանգների հետ չի նուազել, շատ աւելի աշխուժացել է: Շատ բարձր մակարդակի են: Միացեալ Նահանգները իւրաքանչիւր համակարգ է՝ իր բարդ կառուցուածքով: Եւ երբ պահը կը լինի թրամփի հետ հանդիպման, դա օրակարգում կայ, կը լինի, երբ որ կը լինի», - ըսած է Մնացականեանը:



Արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը:

Հարցին, թէ այս պահին բանակցութիւններ կ'ընթանան, որպէսզի թրամփի հետ հանդիպում տեղի ունենայ, Մնացականեանը պատասխանած է. «Սա մեր մշտական օրակարգի հարց է: ԱՄՆ հետ ՀՀ երկխօսութիւնը բարձր մակարդակով այս շրջանում աշխուժացել է»:

Ռուսական ORSIS Ընկերութիւնը Դատ Բացած է ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան Դէմ

Ռուսական հրաձգային զինատեսակներ արտադրող ORSIS ARMS ընկերութիւնը դատի տուած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան՝ գէնքի մատակարարման մրցույթը առանց հիմնաւորման չեղարկելու համար:



Այս մասին տեղեկութիւնը առաջինը շրջանառութեան մէջ դրած է ռուսական կողմը. անցած շաբաթավերջին, մասնաւորապէս, «ՌԻԱ Նովոսթի» գործակալութիւնը հաղորդած է, թէ Մալխին Հայաստանի պաշտպանական գերատեսչութիւնը գէնք-զինամթերքի մատակարարման քանի մը միլիոն տոլարանոց մրցույթ յայտարարած է, որու պահանջները, իբրեւ թէ բաւարարած է միայն ռուսական ընկերութիւնը: «Սակայն շուտով մրցույթը չեղարկուած է՝ առանց պատճառներու բացատրութեան: ORSIS-ը դիմած է բողոքարկման յանձնաժողով, իրաւաբանն ալ հայցներ կայացուցած է», - հաղորդած էր ՌԻԱ Նովոսթին, մանրամասնելով՝ «ORSIS-ի՝ Հայաստանի մէջ գրանցուած ընկերութիւնը քանի մը տարի շարունակ Երեւանին գէնք մատակարարած է, փամփուռներ ու արհեստագիտական այլ միջոցներ»:

«Հիմա մենք սեւ ցուցակի մէջ ենք», - ըսած էին ռուսական ընկերութեան ներկայացուցիչները, պնդելով, թէ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը անհարկի խոչընդոտներ ստեղծած է իրենց համար ու յաւելեալ փաստաթուղթեր պահանջած: «Ստեղծուած բարդ իրավիճակը կը սպառնայ չեղարկել Հայաստանի մէջ փամփուռներու գործարանի շինարարութեան նախագիծը», - յղում ընելով ռուսական ընկերու-

թեան ներկայացուցիչին, հաղորդած էր ՌԻԱ Նովոսթին՝ չմանրամասնելով՝ ինչը նման ենթադրութիւններ ընելու հիմքեր կու տայ: Գործակալութիւնը նաեւ պաշտօնեայի անունը չէր նշած:

Աւելի վաղ հետաքննող լրագրողները ծաւալուն յօդուած հրատարակած էին այս ընկերութեան մասին, պնդելով, թէ այն կապ ունի Ռուսաստանի նախկին փոխվարչապետ, ժամանակին Ատրպէյջանին ռուսական գէնքի վաճառքը համակարգող Տմիթրի Ռոկոպինի հետ:

Կազմակերպուած յանցաւորութեան եւ կաշառակերութեան լուսաբանման նախագիծը անցած տարի փաստած էր՝ Ռոկոպինի որդին՝ Ալեքսէյը եղած է ORSIS-ի հրացանները արտադրող գործարանի գլխաւոր տնօրէնի տեղակալը:

Հայաստանի քննչական կոմիտէն հաստատած է, որ վերը նշուած ընկերութիւնը դատի տուած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան: Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, յարուցուած է քրէական գործ՝ «ծառայութեան նկատմամբ պաշտօնատար անձի անփութ վերաբերմունքի յատկանիշներով»:

Պաշտպանութեան նախարարութեան իստանակ Արծրուն Յովհաննիսեանը «Ազատութեան» հետ զրոյցին մէջ խուսափած է մեկնաբանութիւններէն:

Արցախեան Զեկոյցին Համար Պաքու Բողոքի Գիր Յղած է ՄԱԿ-ի Գլխաւոր Քարտուղարին



Պաշտօնական Պաքուն բողոքի գիր յղած է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին.

Հայաստանի կողմէ կառուցին մէջ Լեռնային Ղարաբաղի մասին փաստաթուղթի տարածման կապակցութեամբ:

Ըստ հայկական կողմի՝ ՄԱԿի մէջ մասնաւորապէս գեկոյց տարածուած է՝ «Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի հիման վրայ ժողովրդավարական պետութիւն կառուցելու եւ տնտեսական, ընկերային ու մշակութային զարգացում ապահովելու նպատակով Արցախի իշխանութիւններու

վարած քաղաքականութեան վերաբերեալ»:

Ատրպէյջանի դիւանագիտական գերատեսչութիւնը յայտարարած է, որ Երեւանը «չարաշահած է իր անդամակցութեան իրաւունքը եւ անջատական ապօրինի ռեժիմի մասին թուղթեր տարածած»:

Լեռնային Ղարաբաղի դիւանագիտական գերատեսչութեան հեղինակած այդ փաստաթուղթին մէջ, որ տեղադրուած է ՄԱԿ-ի պաշտօնական կայքէջին մէջ, ներկայացուած է տեղեկատուութիւն երկրի տարբեր ոլորտներուն մէջ առաջընթացի մասին:

«Մուտիգ»-ը Բարձրացուցած է Հայաստանի Ֆինանսական Վարկանիշը

«Մուտիգ» միջազգային վարկանիշային կազմակերպութիւնը բարձրացուցած է Հայաստանի վարկանիշը «B1»-էն դարձնելով «Ba3»:

Այս մասին «Ֆէյսպուք»-ի իր էջին վրայ գրած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Որոշումը հիմնուած է «Մուտիգի» այն գնահատականների վրայ, որ Հայաստանում տնտեսական աճի շարժիչների աճը՝ գուճակցուելով արդէն երկար ժամանակ պահպանուող տնտեսական կայունութեան հետ, բարձրացնում է Հայաստանի տնտեսութեան դիմադրողականութիւնը: «Մուտիգ» իր յայտարարութեան մէջ նշել է, որ Հայաստա-

նում իրական Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) աճը միջնաժամկէտում կը մնայ բարձր:

Յատկապէս կարեւորուել է Հայաստանում ՏՏ ոլորտի զարգացումը, որն առաւելապէս զբաղուած է բարձր արհեստագիտութիւնների հետազոտմամբ ու զարգացմամբ եւ հանդիսանում է գիտելիքահեղին տնտեսութեան ուժեղ հիմք», - գրած է Փաշինեանը:

ՀՀ վարչապետի խօսքով՝ այս վարկանիշը կը մեծցնէ միջազգային վստահութիւնը Հայաստանի տնտեսութեան նկատմամբ եւ հակասորէն կը բարելաւէ երկրի ներդրումային գրաւչութիւնը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Այցելեց Ջերմուկ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը այցելած է Ջերմուկ: Այցի մասին տեսանիւթերը վարչապետը հրատարակած է Ֆէյսպուքի էջին, ուր նաեւ պարբերաբար ուղիղ հեռարձակումներ կատարած է:

Ջերմուկցիները վարչապետը դիմաւորեցին «Ամուլսարը հանք չի դառնար» վանկարկումներով:



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Ջերմուկի մէջ փակ հանդիպում ունեցած է Ամուլսարի հանքավայրի շահագործման դէմ պայքարող խումբ մը աքթիւիստներու հետ: Հանդիպումէն ետք վարչապետը լրագրողներուն ըսած է, որ ոչ մէկ նոր եզրակացութեան չեն յանգած:

Նիկոլ Փաշինեանն ու անոր ուղեկցող պաշտօնեաները մեկնած են Գնդեւազ համայնք, ուր եւս հանդիպումներ տեղի ունեցած են Ամուլսարի հանքավայրի շահագործման հարցով:

«Լիտիան Արմենիա» ընկերութիւնը Ամուլսարի ոսկիի հանքի շինարարութիւնը սկսած էր

2016-ին՝ յայտարարելով, որ պիտի ներդնէ աւելի քան 400 միլիոն տոլար: Հանք տանող ճանապարհը արդէն մեկ տարիէ աւելի է՝ փակ է. այն շրջափակած են Ամուլսարի յարակից համայնքներու բնակիչները:

Երկուշաբթի օր բնապահպանները եւ Ամուլսարի մերձակայ բնակավայրերու բնակիչները հանքի շահագործման դէմ բողոքի ցոյց իրականացուցին Երեւանի Բաղրամեան պողոտային վրայ: Նույն օրը երեկոյեան վարչապետը յայտարարեց, որ նպատակաւորաբար կը համարէ թոյլ տալ շահագործել Ամուլսարի հանքը:

RyanAir-ը Մտադիր է Յառաջիկային Մուտք Գործել Հայկական Օդային Ոլորտ

Հայաստանի կառավարութիւնը գրասաշրջութիւնը յայտարարած է առաջնահերթութիւն, ոլորտը զարգացման մեծ ներուժ ունի, եւ այս ծիրէն ներս կարեւոր քայլերէն է քաղաքացիական օդանաւային զարգացումը: Այս մասին յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ ընդունելով իւրանդական RyanAir օդանաւային ընկերութեան գլխաւոր տնօրէն Տեյւիտ ՕՊրայընը եւ ուղղութիւններու զարգացման գիծով ղեկավար Քեյթ Շերին:



Նի յառաջիկային մուտք գործել հայկական օդանաւային շուկայ, եւ Քաղաքացիական օդանաւային կոմիտէի, «Ձուարթնոց» օդակայանի հետ ներկայիս քննարկումներ կ'ընթանան այդ գործընթացի շուրջ: Ան ներկայացուցած է Հայաստանի մէջ գործունէութիւն ծաւալելու տեսլականը՝ խօսելով երկրէն նոր ուղղութիւններով թռիչքներու, սակազնային քաղաքականութեան եւ այլ հարցերու շուրջ:

Փաշինեանի խօսքով՝ գործադիրը կը կարեւորէ Հայաստանի օդանաւային շուկային մէջ այս բնագաւառը ներկայացնող առաջատար ընկերութիւններու ներգրաւումը, եւ RyanAir-ի ներկայացուցիչներու հետ հանդիպումը լաւ առիթ է՝ համագործակցութեան հնարաւորութիւնները քննարկելու համար:

Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչունիւնի փոխանցմամբ՝ RyanAir-ի գլխաւոր տնօրէնը նշած է, որ ընկերութիւնը մտադրութիւն ու-

նաւաչին ընկերութեան՝ Հայաստանի մուտք գործելու մտադրութիւնը, կառավարութեան պատրաստակամութիւնը յայտնած է հնարաւորինս աջակցելու այդ գործընթացին:

ՍԴՅԿ «Սարգիս Տիրունի» Միութիւն



Շարունակուած էջ 1-էն

կաթողիկոսը իր օրհնութիւնը բերած է երիտասարդներուն՝ ողջունելով միութեան անդամները հայրենիք առաջնորդելու նախաձեռնութիւնը: Վեհափառ Հայրապետը ընդգծած է, որ նման այցելութիւնները հնարաւորութիւն կ'ընձեռեն ձանձնալու այն բոլոր արժէքներն ու սրբութիւնները, որոնք կերտած է մեր ազգը, որոնցմով ներշնչուած է ժողովուրդը՝ աւելցնելով, որ անոնց պահպանման եւ յաջորդ սերունդներուն փոխանցման պատասխանատուութիւնը դրուած է իւրաքանչիւր հայրորդի վրայ: Այս առումով Նորին Սրբութիւնը կարեւորած է աշխարհասփիւռ մեր ժողովուրդի միասնականութիւնը: Ամենայն Հայոց Հայրապետը

իր ուրախութիւնը յայտնած է նաեւ երիտասարդներու հայրենասիրական ոգիի համար՝ յորդորելով առաւել մեծ սիրով եւ ազգային կեանքին մէջ լիարժէք ներգրաւումը ծառայութեամբ շարունակել ազգային արժէքներու անխաթար պահպանման եւ փոխանցման իրենց նախնիներու գործը:

Նորին Սրբութիւնը յոյս յայտնած է, որ այցը Հայաստան եւ համայն հայութեան հոգեւոր կեդրոն նոր լիցքեր կը հաղորդէ երիտասարդներուն՝ վերափոխելով նաեւ հայրենական կեանքի վերաբերեալ անոնց ընկալումները: Ամենայն Հայոց կաթողիկոսը պատասխանած է նաեւ միութեան անդամներու հարցերուն, որոնք կը վերաբերէին տարբեր ոլորտներու մէջ Մայր Աթոռի գործունէութեան:

Կարօ Փայլանի Խիստ Պատասխանը

Շարունակուած էջ 1-էն

րացականութիւն»:
Կարօ Փայլանը Twitter-ի իր էջին բաւական խիստ գրառմամբ անդրադարձած է վերոյիշեալ յօդուածին:
«Լատինական Ամերիկայի մէջ մեր բոլոր հանդիպումներու ժամանակ մենք միայն կոչ ըրած ենք

աջակցելու թուրքիոյ ժողովրդավարական ուժերուն: Մա ակնյայտ զրպարտութիւն է: Եթէ ըստածները չապացուցեն, ուրեմն զրպարտիչ ես, Մարգար:
1915 թուականի Ապրիլ 24-ին ձերբակալման ենթակայ հայերու ցուցակները կազմելու ժամանակ թալէաթ փաշային աջակցող հայեր ալ կային: Յաւոք այսօր եւս կան»:

Չափազանց Դառնացած Եմ Այս Իրավիճակով

Շարունակուած էջ 1-էն

Յաջորդ՝ մոռցուած կամ նենգափոխուած ճշմարտութիւնը, ըստ Փաշինեանի, Ղարաբաղի բանակցային կողմ ըլլալու հարցին կը վերաբերի՝ - «Ի սկզբանէ Լեռնային Ղարաբաղի բանակցութիւններում բանակցող երեք կողմ է եղել, եւ դա, ըստ էութեան, միջազգայնորէն ճանաչուած միակ բանակցային ձեւաչափն է, որ ինչպէս Ատրպէյճանն է դուրս եկել Խորհրդային Միութեան կազմից, ու դա հիմա ոչ ոք տարօրինակ չի համարում, նոյնպէս եւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզն է դուրս եկել Սովետական Ատրպէյճանի կազմից, ու դա նոյնպէս տարօրինակ չպէտք է համարուի, որ եթէ Ատրպէյճանի նախագահը անգիջում, թշնամական յայտարարութիւններ է անում, ոչ մի տարօրինակ բան չի լինի նրանում, եթէ նոյնպիսի յայտարարութիւններ հնչեն նաեւ Հայաստանից, եւ այլն, եւ այսպէս շարունակ»:

Վարչապետ Փաշինեանը նկատեց, թէ 2018 թուականի թաւալայ յեղափոխութենէն ետք ամրագրուած սկզբունքը, որ արտաքին քաղաքական շրջադարձեր պիտի չըլլան, ամենեւին չի նշանակեր, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ ոչինչ պիտի չփոխուի՝ - «Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ շատ բան է փոխուել, եւ այդ փոփոխութիւններից առանցքայինը աւանդական խուսանաւումների քաղաքականութիւնը փոխարինելն է սեփական յստակ դիրքորոշում ունենալու եւ այդ դիրքորոշումը հետեւողականորէն պաշտպանելու քաղաքականութեամբ: Սա, ի հարկէ, չի նշանակում, թէ մեր կառավարութիւնը հրաժարուել է խուսանաւումը, ճկուն լինելու գործիքակազմից: Քաւ լիցի, դա անհար է եւ ոչ խելամիտ: Բայց խուսանաւել, առանց յստակ եւ սեփական երկրի ազգային շահերին համապատասխան դիրքորոշում ունենալու, նշանակում է Հայաստանը դնել հեղեղի մէջ ընկած տաշեղի կարգավիճակում, իսկ խուսանաւել յստակ, հասկանալի եւ սեփական երկրի ռազմավարական շահերից բխող դիրքորոշումներ ունենալով՝ նշանակում է այդ հեղեղի մէջ լինել

առնուազն նաւակի կարգավիճակում եւ հնարաւորութիւն ունենալ կառավարել սեփական ընթացքը եւ ինչ-որ առումով՝ նաեւ հեղեղը»:

Դիւանագէտներէն բացի, համաժողովին մասնակցած էին նաեւ Պաշտպանութեան նախարարը եւ Ազգային Անվտանգութեան ծառայութեան պետը:

Արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեան իր ելույթին մէջ յատակցուց թաւալայ յեղափոխութենէն ետք Հայաստանի արտաքին քաղաքականութեան սկզբունքները՝ ինքնիշխանութիւն, համահայկականութիւն, փոխգործակցութիւն:

«Հայաստանում տեղի ունեցած թաւալայ յեղափոխութիւնը գերծ էր աշխարհաքաղաքական կողմնորոշումներից եւ դրա լաւագոյն վկայութիւնն է այն իրողութիւնը, որ Հայաստանը չկատարեց համաշխարհային ուժերի չարաբերակցութիւնը փոփոխող արտաքին քաղաքական քայլեր եւ ձեռնամուխ եղաւ իր յարաբերութիւնները բոլոր դերակատարներին հետ կառուցելու ինքնիշխանութեան սկզբունքի հիման վրայ», - համաժողովի բացման խօսքին մէջ ըսաւ Մնացականեան:

«Ատրպէյճանն իր անփոփոխ հայատեաց քաղաքականութեամբ շարունակում է մնալ Արցախի ժողովրդի գոյութեան սպառնալիք», - յայտարարեց նախարարը՝ շեշտելով, որ խաղաղութիւնը այլընտրանք չունի, Հայաստանը եւ Արցախը ունին բաւարար ուժ խաղաղութեան ապահովման համար: - «Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը եւ բոլոր պայմաններում կիրառելի մարդու անօտարելի իրաւունքները ենթադրում են նաեւ ազատ կամարտաչափում, որը ներառում է նաեւ Արցախում ազատ ընտրութիւնների իրականացումը եւ այդ ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած իշխանութեան ներկայացուցիչների գործուն ներգրաւումը բանակցային գործընթացում: Եթէ Ատրպէյճանն անկեղծօրէն շահագրգռուած է հակամարտութեան խաղաղ կարգաւորմամբ, ապա պէտք է նոյնչափ շահագրգիռ լինի Արցախի ժողովրդի ընտրեալ ներկայացուցիչների հետ բանակցելու մէջ»:

Ինչու Մաս Զենք Կազմեր

Շարունակուած էջ 1-էն

Մենք նպատակայարմար չենք նկատելու ման խորհուրդի կազմութիւնը եւ կը խորհիմք որ ան կրնայ բացասական հակազդեցութիւն յառաջացնել այս համայնքէն ներս, ուր կը գործեն բազմաթիւ այլ կառույցներ ու անհատ մախաձեռնութիւններ, որոնք իրենց կարգին ներդրում ունին մեր ազգային կեանքէն ներս:

Ինչպէս անցեալին, այսուհետեւ եւս ՍԴՅԿ պատրաստ է համագործակցելու ազգային մեր բոլոր կառույցներուն հետ՝ ի շահ Հայաստանի ու Արցախի եւ մեր ազգային գերագոյն նպատակներու իրագործման ուղղութեամբ: Սակայն մնալու կառույցի մը ստեղծումը կը գտնենք անհեռանկարային ու ժամանակավրէպ:

«ՄԱՍԻՍ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Հայաստանի ճատրակի Կանանց Ախոյեան Մարիա Գեորգեանը Չի Մասնակցիր Թուրքիոյ Սրցաշարքին Ատրպեյճանական Վերջնագիրի Պատճառաւ



Թուրքիոյ Սրվազ (պատմական Սեբաստիա) քաղաքին մէջ Օգոստոս 19-ին, մեկնարկած է Sivas Buruciye International Open Chess Tournament-A-ը, որուն մասնակցութեան հրաւեր ստացած էր նաեւ Հայաստանի ճատրակի կանանց հաւաքականի անդամ, միջազգային կարգի վարպետ, Հայաստանի եռակի ախոյեան Մարիա Գեորգեանը:

«Ֆէյսպուք»-ի իր էջին այս մասին գրառում կատարած է ՀՀ Ազգային ժողովի կրթութեան, մշակութի եւ սփիւռքի հարցերով մշտական յանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետեանը:

«Մեր մարզուհիին, սակայն, բոլոր պայմանաւորումներէն բացառելով յետոյ՝ վերջին պահին, մրցաշարի կազմակերպիչներէն Մուսթաֆա էրօղլուն տեղեկացուցած է, որ ատրպեյճանցի մարզիկները իրենց վերջնագիրներ կայացուցած են՝ հրաժարելով մասնակցութենէն: Ըստ էրօղլուի՝ ատրպեյճանցիները այդ քայլին գացած են, քանի որ հայ մարզուհին պիտի մասնակցէր մրցաշարին: Որպէս արդիւնք, հայ մարզիկը այլեւս հնարաւորութիւն չէ ունեցած մասնակցելու միջազգային մրցաշարին, քանի որ ճանապարհածախսն ու կեցութեան գումարը պիտի հոգար հրաւիրող կողմը, որն ալ, փաստացի, հրաժարած է:

Այսպիսով, հերթական անգամ կ'առերեսուինք սփորթի մէջ ցեղապաշտութեան ու արմենոֆոպիայի դրսեւորման խիստ դատապարտելի երեւոյթին. ընդամէնը երեք ամիս առաջ հայազգի ֆութպոլ-

լիստ շենրիս Մխիթարեանը չկարողացաւ մասնակցիլ Պաքուի մէջ կայանալիք Եւրոպայի լիկայի եզրափակիչին՝ Ատրպեյճանի կողմէ անվտանգութեան բաւարար երաշխիքներ չտալու ու ենթադրեալ հայկական ծագում ունեցող երկրպագուներու մուտքը Ատրպեյճան արգիլելու պատճառով:

Այժմ իրավիճակի բացառիկութիւնը այն է, որ վերոնշեալ ճատրակային մրցաշարը ոչ թէ Ատրպեյճանի մէջ կ'իրականացուի, այլ երրորդ երկրի՝ Թուրքիոյ, եւ, փաստացի, ատրպեյճանական կողմը ճնշում կը գործադրէ՝ առաջնորդուելով ցեղապաշտական հռետորաբանութեամբ:

Հաշուի առնելով վերոգրեալը՝ կը դիմեմ ճատրակի միջազգային ֆետերացիային՝ ՖԻՏԷ-ին (Federation Internationale des Echecs), ուսումնասիրելու ստեղծուած իրավիճակը եւ մարզասէր հանրութեան տրամադրելու պատասխաններ՝ ստեղծուած իրավիճակի վերաբերեալ: Դատապարտող յայտարարութիւնները, աւաղ, այլեւս չեն կրնար վերականգնել մեր մարզուհիին մասնակցութիւնը մրցաշարին ու արդէն իսկ անդրադարձած են անոր բարոյահոգեբանական վիճակի վրայ, սակայն կրնան թոյլ տալ խոստովիլ ցեղապաշտական ու այլատեսացութեան յետագայ դրսեւորումներէ:

Սփորթի առաքելութիւնը դեռ հին ժամանակներէն եղած է տարբեր ազգերու մարդոց միաւորելն ու համերաշխութիւն ու խաղաղութիւն քարոզելը: Մինչդեռ 21-րդ

Լրագրողական Կազմակերպութիւնները Վիճայարոյց կը Համարեն Կառավարութեան Մշակած Օրէնսդրական Փոփոխութիւնը



Լրագրողական կազմակերպութիւնները խիստ վիճայարոյց կը համարեն Արդարադատութեան նախարարութեան մշակած եւ Քրէական օրէնսգիրքին մէջ առաջարկուող փոփոխութիւնը, որ ըստ կազմակերպութիւններու, կրնայ յանգեցնել «արտայայտուելու ազատութեան իրաւունքի չարդարացուած սահմանափակման»:

Հայաստանի իշխանութիւնները մտադիր են քրէականացնել բռնութիւն գործադրելու հրապարակային կոչերն ու բռնութիւնը հրապարակայնօրէն արդարացնել կամ քարոզելը:

Արդարադատութեան նախարարութիւնը նախորդ շաբաթ հանրային քննարկման ներկայացուց «Քրէական օրէնսգիրքին մէջ լրացում կատարելու մասին» օրէնքի նախագիծը, որով կ'առաջարկուի պատասխանատուութիւն նախատեսել անձի կեանքի կամ առողջութեան համար վտանգաւոր բռնութիւն գործադրելու հրապարակային կոչերու, անձի կեանքի կամ առողջութեան համար վտանգաւոր բռնութիւնը հրապարակայնօրէն արդարացնելու կամ նման բռնութիւն քարոզելու համար:

Պատիժը տուգանքն է նուազագոյն աշխատավարձի հինգհարիւրապատիկից հազարապատիկի չափով կամ կալանքը՝ երկուքէն երեք ամիս ժամկէտով, կամ ազատագրուածը՝ առաւելագոյնը երեք տարի ժամկէտով:

Տեղեկատուութեան ազատութեան կեդրոնի ղեկավար Շուշան

դարուն, որ իրաւամբ հռչակուած է որպէս մարդու իրաւունքներու եւ ազատութիւններու վերագործօնքի դարաշրջան, կը շարունակենք

Դոյզոյեանը կը կարծէ, որ առաջարկուող կարգաւորման բուն նպատակը պէտք է ըլլար ՀՀ օրէնսդրութեամբ տալ «ատելութեան խօսք» հասկացութեան յստակ եւ սպառիչ սահմանումը: Մինչդեռ, ըստ Դոյզոյեանի, առաջարկուող կարգաւորումը ոչ միայն չի տար «ատելութեան խօսք» հասկացութեան սպառիչ եւ ամբողջական սահմանումը, այլեւ խիստ ընդհանրական ձեւակերպմամբ փորձ կ'ըլլայ քրէական պատասխանատուութիւն, ներառեալ ազատագրուած սահմանել բռնութիւն գործադրելու հրապարակային կոչերու, բռնութիւնը հրապարակայնօրէն արդարացնելու կամ քարոզելու համար:

Լրագրողական կազմակերպութիւնները կ'ընդգծեն նաեւ, որ պետական մարմիններու միջամտութիւնը պէտք է համաչափ ըլլայ եւ չյանգեցնէ ազատ արտայայտուելու իրաւունքի անհիմն սահմանափակման:

Դոյզոյեանը նշած է, որ լրագրողական կազմակերպութիւնները իրենց կարծիքը ուղարկած են Արդարադատութեան նախարարութեան: Կ'առաջարկեն կը սեղանի շուրջ քննարկել նախագիծը:

Դեռ երկու ամիս առաջ կառավարութեան նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեանը իրաւապահ մարմիններուն յանձնարարեց ոչ թէ թաւշեայ, այլ երկաթեայ հակահարուած տալ բռնութեան քարոզ հնչեցնող ուժերուն, որոնց շարքին վարչապետը դասեց նախկին փտած համակարգի հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցողները:

բախուիլ յետադիմական այնպիսի պարսաւելի երեւոյթի, ինչպիսին ցեղապաշտութիւնն է», - գրած է Հայրապետեանը:



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE


(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815


MaronianInsurance.com



HEALTH



LIFE



COMMERCIAL

Նշուեցաւ Վազգէն Ա. Զայրապետի Վախճանման 25 Ամեակը



Լոս Անձելոսի հայ համայնքին համար իւրայատուկ ձեռնարկ մըն էր, որ տեղի ունեցաւ անցեալ Երեքշաբթի, Օգոստոսի 20ին, 2019, Պըրպէնքի առաջնորդարանի Զոռայեան սրահին մէջ, նուիրուած հոգելոյս Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետ վախճանման 25-ամեակին:

Ընտրանի հասարակութիւն մը լեցուցած էր սրահը, որուն բեմին վրայ սահիկներով կը ցուցադրուէր տեսարաններ հանգուցեալ վեհափառի կեանքէն առնուած յատկանշական դրուագներ:

Ներկաներուն մէջ էին Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, հոգեւոր հայրեր, կուսակցական եւ տարբեր կամակերպութեանց ներկայացուցիչներ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Մովսիսեան: Ան առանձնապէս շեշտեց Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 40 տարիներու անսակարկ նուիրումը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պայծառութեան, որպէս եզակի հովուապետ, ինչպէս նաեւ կրօնական եւ հոգեւոր ազգային արժէքներու հետամուտ ռահվիրան:

Սուրբ Ղեւոնդ Մայր տաճարի Երիտասարդական Միութեանն եւ Երիտասարդ-երիտասարդուհիներ, ներկաներուն փոխանցեցին եօթը իմաստուն պատգամներ, քաղուած Վազգէն Ա.ի ելոյթներէն:

Էլինա Ավանեսեանի (դաշնամուր) եւ Լիլիա ու Ալեքսանտրա քոչըրերու (գուզերգ եւ քանոն) երաժշտական գեղահնչիւն կտարումներէն ետք ելոյթ ունեցաւ Օքլընտ քաղաքի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Յովել Քհնյ. Օհանեան: Տէր Հայրը իւրայատուկ պերճախօսութեամբ եւ ինքնուրոյն մօտեցումով, արժեւորեց հոգելոյս Վազգէն Ա.ի նկարագրային եւ ծառայական բազմադիւն կեանքը: Մեծ է Վազգէն Ա.ի ձգած ժառանգութիւնը, որ հիմնուած է գլխաւորաբար սիրոյ վրայ «Մէրը երբեք չի վերջանար» գրուած է իր շիրմաքարին վրայ: Սիրեց իր եկեղեցին,

սիրեց հայրենիքը անոր ամենադժուար պահերուն: Այդ սէրը՝ փշրեց երկաթէ վարագոյրը: Իր հայրապետական այցելութիւններով սիրել տուաւ մեր հայրենիքը, մեր ինքնութիւնը, մեր լեզուն ու պատմութիւնը:

Մէրը հանդէպ մեր եկեղեցիին ու հաւատքին: Վեհափառը չընդունեց բաժանումը: Ան միշտ յորդերոց որ սիրով վերադառնան անոնք որոնք անջատուած կը մնան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն: Հաշտութեան եւ միութեան ոյժը յաղթանակն է: Ժամանակը եկած է որ բռունցք դառնանք, պարտաւոր ենք պահպանելու մեր ժառանգութիւնը: Եկէք հետեւինք մեր վեհափառի ձգած ժառանգութեան:

Միջոցառման աւարտին խօսք առաւ Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան ի միջի այլոց ըսաւ. «գԱստուած փնտրելու ճանապարհին մէջ գտանք Ս. Էջմիածինը: Անձնապէս բազում յիշատակներ ունիմ վեհափառ Վազգէն Ա.էն: Անմասն վեհափառ մը, զինք երբ տեսանք, Սեպտեմբեր 15, 1976ին, մեր մէջ կը ծնէր նոր մարդ մը, նոր ճանապարհորդութիւն մը, նոր կոչում մը, նոր սէր մը իմ ժողովուրդին ու Հայաստանի հանդէպ: Իր խօսքերուն մէջ մենք տեսանք սէրը Աստուծոյ հանդէպ, ոսկէ կամուրջ անցեալը գալիքին կապող: Մեծ յարգանք Հայրապետին որ թէ ուսուցիչ էր եւ թէ հոգեւորական»:

Երեկոյի հետաքրքրական մասերէն մին էր Վազգէն Ա.ի կեանքին նուիրուած եւ մեծ խնամքով պատրաստուած տեսաերիզի ցուցադրութիւնը: Հոն կային դրուագներ որոնք առնուած էին վեհափառի գործունէութեան տարբեր հանգրուաններէն (այց, արարողութիւն, հանդիսութիւն) տեսարաններ եւ տպաւորութիւններ հոգեւոր եւ աշխարհիկ անձնաւորութիւններէն:

Աւարտին տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն պատրաստուած Ս. Ղեւոնդ Մայր Տաճարի Տիկնանց Օժանդակ Միութեան կողմէ:

Երախտագիտութեան յիշատակելի երեկոյ մըն էր ձօնուած հայ եկեղեցւոյ նուիրեալ վեհապետին:

Յայկական Բարքեր



ԳԵՌՈՂ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Ոչ Եւս Է Յայկական Ծաղկասայլը...

Մեծ Եղեռնի հարիւրամեակի առաջին նախաձեռնութիւնը Հայկական Ծաղկասայլն էր՝ որ մօտ 40 այլ ծաղկասայլերու հետ մասնակցեցաւ Փաստօրինայի Վարդերու Փարատօնին, 1 Յունուար 2015-ին:

Հայկական առաջին ծաղկասայլը՝ «Քաղաքակրթութեան Օրրան» բնաբանով (Cradle of Civilization), շահեցաւ «Նախագահ»-ին պատուաբեր մրցանակը: Բոլոր հայերուն՝ ի սփիւռս աշխարհի, սրտերն ու հոգիները անհուն հպարտութեամբ լեցուցան եւ մենք խանդավառուեցանք եւ բռուն կերպով ծափահարեցինք՝ ի տես այդ բացառիկ յաջողութեան:

Հայկական Ծաղկասայլի Ընկերակցութեան վարիչ մարմնի բոլոր մը անդամներուն տքնաջան աշխատանքը՝ բնաբան ընտրելու, դրամ հաւաքելու եւ կամուրջ աշխատող մարդերու, որ կը տեւէ ամբողջ տարի մը, բեղմնաւորութեան եւ հինգ տարի շարունակ անոնք կրցան յաջողցնել Փաստօրինայի Վարդերու Փարատօնին մասնակցելու իրենց երազը:

Հոս փակագիծ մը բանալով պէտք է ըսեմ որ ծաղկասայլին տարեկան ծախսը կը հասնի 300,000-350,000 տօլարի, որը մեծ պարտաւորութիւն մը չէ եթէ նկատի առնենք Գալիֆօրնիոյ հայաշատ գաղութը: Այդ գաղութը կրցաւ հինգ տարի նեցուկ կանգնել Հայկական ծաղկասայլի գոյատեւման:

Բայց ինչո՞ւ հիմա յանկարծ Հայկական Ծաղկասայլի Ընկերակցութիւնը ինքզինք գտաւ անելի մը առջեւ . . . Ամօթ մեզի եթէ մենք չենք կրնար որպէս բարեկեցիկ գաղութ՝ նիւթապէս նեցուկ կանգնել անոնց եւ հոգալ այդ ծախսերը: Գալիֆօրնիոյ գաղութը կը հաշուէ առնուազն 300,000 հայ: Եթէ իւրաքանչիւր հայ՝ տարեկան մէկ տօլար տրամադրէ այդ ընկերակցութեան, մենք հպարտօրէն կրնանք շարունակել այդ նախաձեռնութիւնը:

Հպարտանալն ու ծափահարելը միայն չի բաւէր, այլ պէտք է իւրաքանչիւր հայ՝ իր նիւթական կարելիութեան սահմաններուն մէջ, նպաստէ այդ ձեռնարկին, արպէսդ յարութիւն առնէ այդ ծաղկասայլը եւ մենք կարենանք ճակատաբաց դարձեալ դիմաւորել հայկականութիւն բուրդը այդ երթը՝ ամէն տարուան առաջին օրը:

Եկէք բոլորս միասին չթողունք որ «Ոչ Եւս» ըլլայ հայկա-

կան ծաղկասայլը, այլ աշխատինք ու նիւթամէս օգնենք որ ան շարունակէ իր տողանցքը՝ գոհունակութիւն պարգեւելով աշխարհով մէկ ձրուած հայութեան:

Հարսանեկան Խրախճա՞նք, Թէ Դրամահաւաք...

Ես երկար տարիներ ապրած եմ Սուրիոյ Հայկա քաղաքը: Հոն՝ ամուսնութիւնը կը բաղկանար երկու հանգրուաններէ: Պսակադրութիւն՝ որուն կը հրաւիրուէին թէ ազգականները եւ թէ ալ դրացիներն ու բարեկամները: Իսկ ապա խրախճանք՝ որուն կը հրաւիրուէին մօտիկ ազգականները միայն: Այդ խրախճանքը շատ լաճախ տեղի կ'ունենար փեսային տան բակին մէջ:

Ամերիկայի մէջ սակայն, տարբեր է ամուսնութեան ըմբռնումն ու գործադրութիւնը: Ազգականներու կողքին՝ բարեկամները, դրացիներն ու գործակիցները ալ կը հրաւիրուին թէ պսակադրութեան եւ թէ ալ Հարսանեկան խրախճանքի, որուն թիւր կը հասնի 300-400 հոգի...

Ես հոս ամուսնացայ 1980 թուականին: Այն ժամանակ՝ մեզի եկած հարսանեկան նուէրները կը բաղկանային խորհրդանշական նուէրներէ, որն էր այդ օրերու սովորութիւնը: Իսկ հիմա՝ ամուսնացող գոյգերը կ'ակնկալեն եւ կ'ստանան նիւթական նուիրատուութիւն միայն, որը երթալով կ'աւելնայ: Հոս պէտք է աւելցնել որ անձ գլուխ եղած այդ նուիրատուութեան չափը կը տարուբերի, ըստ խրախճանքի սրահի ճոխութեան:

Ըստ ինձի, խրախճանքը վերածուած է դրամահաւաքի: Ինչո՞ւ մէկը պէտք է ուրիշին դրամով խրախճանք սարքէ: Եթէ դրամ չունիս, վազ անցիր խրախճանքէն: Իսկ եթէ դրամ ունիս, խնդրէ որ այդ հաւաքուած դրամը տրուի հայկական հաստատութեան մը: Օրինակ՝ այդ գումարը կրնայ դրկուիլ դպրոցի մը, ծերանոցին, եկեղեցիի մը եւ կամ ալ հայ մամուլին՝ որոնք այնքան կարիք ունին նիւթական ներդրումի, չէ՞ք խորհիր:

Վահան Ղազումեանը իջեւանից է: Արդէն հեռաւոր 1947-ին, 25-ամեայ գիւղատնտես-մեխանիկը գալիս է մայրաքաղաք ու հաստատուում Երեւանում: Քարի հետ աշխատելու բնատուր շնորհք ունենալով՝ ներգրաւուում է նոյն գինու կոմբինատի շինարարութեան մէջ, իսկ յետոյ էլ արդէն աշխատանքի է ընդունուում այստեղ: Գինու գործարանի տարածքի բարեկարգմանն է հետեւում: Այնպէս, որ երբ մի առիթով Երեւանի քաղաքապետ Գրիգոր Հասրաթեանը այցելում է գինու կոմբինատ, տպաւորուում է տարածքի խնամուած տեսքից, ծանօթանում վարպետ Վահանի հետ:

Նա էլ սիրուած քաղաքապետին առաջարկում է, որ գինու գործարանի անմիջական հարեւանութեամբ տարածքն էլ կարելի է տեսքի բերել: Ասուած է՝ արուած է: Բայց ինչպէս:

Վարպետի որդին, ազատամարտի վետերան Սամուէլ Ղազումեանը պատմում է, որ աշխատանքի մեկնարկը 1971-ին է եղել, աշնանը, «Արարատի» եւ Մինսկի «Դինամոյի» խաղի օրը: Տարածքում, որ տարիներ անց Շիրազը պետք է



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Շատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:


Նախքան Ձեր ծրագիրներուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կատաշարկով՝

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունինք նաեւ թաղման ու յուղարկարութեան ծառայութիւններ յարմար գիններով

Մանրամասնութեան համար դիմել՝

ISABEL CRISTINA KEMANIAN
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemania@sci-us.com



Երաժշտագետ Եւ Ազնուգական Գրիգոր Փիտէճեանի Յիշատակին Կարա Մուրզայի Անզուգական Մեկնաբանը (1935-2019)

ԴՈՏԿ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՅՆ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երկու Պատանհիներ

Յաւ ի սիրտ «Պայքար»էն տեղեկացայ երաժշտագէտ ու մեծ արուեստաբան, Կարա Մուրզայի բացառիկ մեկնաբան Գրիգոր Փիտէճեանի մահուան մասին: Վերջերս երբ կը խօսէի իր հետ, կը գանգատէր մի քանի առողջական պատճառները թուելով, եւ սակայն մահուան գոյժը անակնկալ եղաւ ինձ համար:

Աւագանէն Յակոբ Փիտէճեան 12 տարեկան, ծնած Աղեքանդրիա, կը հանդիպէր Գահրիբէէն ամառանային ճամբարի արձակուրդով Աղեքանդրիա մեկնած 14-ամեայ Դանիէլ Արզումանեանին: Երկուքը կը մտերմանային երբ օր մը Յակոբ ինձ համար «Գթա Տէր» շարականը կ'երգէր, լսած ըլլալով տեղուցի ծերունի վարդան Քահանայ Գարակէօզեանէն: Ինձ համար անծանօթ շարական մըն էր: Տարիներ ետք երբ երկուքս Անթիլիասի Դպրեվանք կ'ուսանէինք, յիշեցուցի շարականին մասին: Վերջերս հեռաձայնին վրայ դարձեալ յիշեցուցի պատանեկան մեր հանդիպումն ու «Գթա Տէր» շարականի իմ առաջին ուսուցիչը ըլլալը: Ազնուական Գրիգոր Փիտէճեան յետագային միշտ յոգնականի կը խօսէր հետս իր թաքուն եւ արուեստագէտի բարի նկարագիրը ցոլացնելով:

Փիտէճեան Անթիլիաս ժամանեց ինձմէ երեք տարի ետք, ու հին նկարներէն յայտնի կը դառնայ որ որպէս ժառանգաւոր ներկայ եղած է մեծանուն Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Հայրապետի 1952 թուի յուղարկուած թեան: Ասկէ Տարի մը առաջ ինձի ուղարկեց երկու հին նկարներ Անթիլիասի Ուխտի Օրուան թափօրներէն որուն ես որպէս սարկաւազ ու ինք ժառանգաւոր մաս կը կազմէինք: Իմ կարգին իրեն դրկեցի փոքրիկ նկար մը ուր Փիտէճեան 1954 Յուլիս 4-ին կը լուար նոյն օր ձեռնադրուած եւ օծուած Հայր Զաւէն Արզումանեանի միւսուսաբար ձեռքերը որպէս կրտսեր կնքահայր:

Յայտնի Երաժշտագետը

Կիլիկիոյ Անթիլիասի Կաթողիկոսութեան Դպրեվանքի պատմութեան մէջ Գրիգոր Փիտէճեան կը հանդիսանայ միակ շրջանաւարտը որպէս միջազգային որակով յայտնի Փրոֆ. երաժշտագէտ, մեկնաբան եւ խմբավար: Իր ստացած բարձրագոյն ուսումն ու զարգացումը զինք Հայաստան առաջնորդեցին ուր եւս երաժշտական մարզէն ներս յատուկ ուշադրութեան եւ բարձրագոյն պատիւներու արժանի դարձաւ, յատկապէս երբ արդէն ի լոյս ընծայած էր ինձի ուղարկած երկու բացառիկ հատորները՝ «Կարա Մուրզայի Կեանքն ու Գործը», եւ «Անձինք Նուիրեալք» շարականի մանրամասն մեկնաբանութիւնը՝ բնագրային եւ շարականագիտական հիմունքով: Երկուքն ի մի յայտնի երաժշտագէտ Գրիգոր Փիտէճեանին պարծանքը կը հիւսեն, ի միջի այլոց ուրիշ երաժշտագիտական երկերու եւ յօդուածներու հետ միասին, որոնցմէ յիշեալ երկուքին առանձինն կ'անդրադառնամ ստորեւ:

Առիթով մը կը խօսէինք



Դպրեվանքի երաժշտութեան մեր ուսուցիչին յայտնի համբաւաւոր երաժիշտ եւ երգահան Համբարձում Պէրպէրեանի մասին: «Համբարձում Պէրպէրեան մեր օրերու մեծագոյն երաժշտագէտներէն մին եղաւ» կ'ըսէր, բարձր գովասանքներով, երբ իրեն կը յիշեցնէի մեր ուսանողական տարիներուն Գարեգին Ա Մեծ Հայրապետին 1951 թուի առաջարկը Համբարձում Պէրպէրեանին, վարդանանց 1500-ամեակին առիթով համաժողով մը ստեղծագործելու: Պէրպէրեան, Գարեգին Յովսէփեանց Հայրապետին իղձը իսկոյն իրականացուց մեր ուսանողական օրերուն, վահան թէքէեան մեծ բանաստեղծի «Խորհուրդ վարդանանց» բանաստեղծութեան վրայ յօրինելով զմայլելի Գանթաթան որ համազգային պատիւ բերաւ մեր եկեղեցուց եւ ազգին, գայն անձամբ ղեկավարելով նուագախումբի եւ երգչախումբի լիակատար մասնակցութեամբ: 1951-ի առաջին ներկայացումին, որուն մաս կազմեցինք նաեւ ուսանողներս, Հայրապետը լսեց ու զմայլեցաւ գոհունակ սրտով: Համբարձում Պէրպէրեան վարդանանց Օրաթորիոն ղեկավարեց աշխարհով մէկ, Հայրենիքի, Միջին Արեւելքի եւ Ամերիկայի մէջ բազմաթիւ անգամներ:

Գրիգոր Փիտէճեան շատ ծանօթ էր Գանթաթանին երբ յայտնեցի որ ձայնագրութիւնը իր վերջնագոյն ձեւին մէջ ունէի եւ երբեմն ձեռքս առնելով կ'երգէի մայր եղանակը զոր իւրացուցած էի, եւ մինչեւ օրս կ'երգեմ ինձ համար: Գրիգորին կ'ըսէի թէ այնքան հարգատու էի չէի կրնար հետեւիլ ձայնագրութեան, եւ ինձի կ'ըսէր թէ պիտի ջանաս զատորոշել մայր եղանակը մնացեալ դաշնաւորումէն:

Երաժշտագետին Աւանդը

Հայ երգարուեստն ու շարականագիտութիւնը շատ բան կը պարտին Փրոֆ. Գրիգոր Փիտէճեանին: Իր թողած կարեւորագոյն երկու գործերէն մին Կարա Մուրզայի կեանքին ու երաժշտութեան եւ անոր «առաջին հայկական Պատարագին» նուիրուած արժէքաւոր հատորն է: Իսկապէս անզուգական գործ մը ուր վերջին ու ամբողջական խօսքը կ'ըսուի 19-րդ դարու այդ վաստակաւոր հայ երաժիշտի մասին: Ուրիշներ շատ գրած են Կարա Մուրզայի մասին, սակայն թերի եւ ոչ-մասնագիտական:

Փիտէճեանի սոյն հատորին մէջ Կարա Մուրզայի կեանքի մասին ազօտ եւ կնճռոտ մնացած

Օգոստոս 20, 2014
Փրոֆեսոր Գրիգոր Փիտէճեան
Կոմիտասի Անուան Կոնսերվատորիայի
Նիւ Եորք
Սիրելի Փրոֆ. Փիտէճեան
Սիրելիդ անունն ու վաստակը որպէս սրտակից դպրոցակից աւելի քան 60 տարիներէ ի վեր, գերազանց փայլեցաւ երբ ստացայ ամիսներ առաջ Քրիստափոր Կարա Մուրզայի մեծադիր եւ ամբողջական հատորը այնքան բժախնդրութեամբ եւ մատենագիտական հմտութեամբ գրուած, թէ՛ պատմական տեղեկութիւններով եւ թէ՛ մանաւանդ Կարա Մուրզայի երաժշտական մեծ վաստակով՝ գլխաւորութեամբ առաջին բազմաձայն Ս. Պատարագի յօրինմամբ: Լսեցի Պատարագը եւ հիացայ որպէս հնագոյնը բազմաձայն յօրինումներուն մէջ:
Գիրքը, անտարակոյս առաջին եւ վերջին խօսքը եղաւ Կարա Մուրզայի վաստակի մասին: Վերջերս կարդացի մեծ հետաքրքրութեամբ իր կեանքի ելեւէջներով հասուն եւ փխրուն տուեալներով հարուստ գործը, բոլորիս անծանօթ, յատկապէս գիրքի տիպի տեղադրած այնքան բժախնդիր եւ վաւերականութիւն տուող համերգներու լրիւ յայտարարութիւններն ու մեկնաբանութիւնները՝ տեղով, թուականով եւ համայնքներու յատուկ տուեալներով:
Ուշացայ գրելու, Սիրելի Գրիգոր, բայց այսօր երբ շատ բան սորվեցայ Կարա Մուրզայի մասին, որուն անունը միայն իր ժամանակակիցներուն՝ Սիւնիի, Եկմալեանի եւ Կոմիտաս վարդապետի շարքին լսելի էր առանց նոյնիսկ գիտնալու իր նորահնար բազմաձայն Պատարագի յօրինումի մասին որպէս ռահվիրայ եւ ոչ ընդօրինակող, մեզի կը մնայ երախտագէտ ըլլալ քեզի կատարած մնայուն եւ անդու աշխատանքներու եւ մեծապէս արդիւնալից աշխատանքիդ համար:
Իմ եղբայրական շնորհակալութիւնները մակագրած օրինակիդ համար: Որոշած եմ, անշուշտ ոչ-մասնագիտական ուղիով, գրախօսական մը գրել որպէս տրիտուր կատարած մնայուն աշխատանքիդ համար: Սեպտեմբերի կիսուն Դայաստան կը մեկնիմ տաս օրուան համար եւ անունդ բարձր բռնած պիտի փնտռեմ երաժշտակիցներդ մէկը կամ միւրը:
Կը յուսամ առողջութիւնդ գտած ես եւ Տիրոջ կամքով կը շարունակես աշխատանքդ որուն համար աղօթակից ենք քեզի եւ սիրելի ընտանիքիդ անդամներուն հետ: Առ այժմ ցտեսութիւն:
Ձերմագին սիրով
Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան



Կաթողիկոսին «Անձինք Նուիրեալք սիրոյն Քրիստոսի» հոյակապ շարականն է, այլեւնական տառակիրգրներով՝ 36 տուն, Ա-էն Ք: Շարականին երաժշտագէտը, ըստ Փիտէճեանի, եղած է նոյն ինքն Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսը, որ հեղինակն է թէ՛ 36 տուններու հոյակապ բանաստեղծութեան եւ թէ՛ նոյնքան սրտառուչ ԴԿ դարձուածք եղանակին: Յիշելու ենք որ այդ պատճառով մեր անմիջական անցեալի Կոմիտաս վարդապետ ժառանգեց Կաթողիկոսին անունը արժանաւորապէս:

Միայն պատմական դէպքերուն ակնարկն ու շարականին համապատասխան յօրինումը չէ՛ եղած երաժշտագէտ Փիտէճեանի աշխատանքին հորիզոնը, այլ ան կատարած է աննախընթաց գործ՝ հաւաքելով նոյն ԴԿ դարձուածքի հիմնական շարականները ու զանոնք բաղդատած «Անձինք» շարականին հետ: Գիրքին մէջ կը յայտնաբերուին բերանացի եղանակներու եւ գրաւոր երաժշտութեան յարակցութիւնը, ժամանակներու հետ յառաջացած զարգացումները, յանգելով այն եզրակացութեան որ մայր եղանակը «Անձինք» շարականէն կուգայ ու կը տարածուի միւս նոյնանման շարականներուն վրայ, զորս Փիտէճեան յանուանէ կը հրատարակէ երաժշտական նօթերով միասին որպէս նմոյշ առաջին անգամ ըլլալով:

Ազնուական Արուեստագետը

Մեր ներկայ ժամանակներուն այլեւս չենք հանդիպել վաւերական երաժշտագէտ հայրերի, Սովետական կարգերու փլուզումէն

Ես ալ Արովեանական Դարձայ



ԼԻՆՏԱ ՊԱՆՏԻԼԵԱՆ

ՅուՆիսի վերջին օրերն էր, վաղ առաւօտեան ժամերուն անձրեւի օրհնաբեր կաթիլները իրենց զովացնող ու հաճելի զգացողութեամբ ընդունեցին զիս Հայաստանի հազարամեայ մայրաքաղաք Երեւանի մուտքին, չաջորդող երկու օրերու ընթացքին Երեւանը ընդունեց ինձի նման նաեւ 61 ուսուցիչներ աշխարհի 15 երկիրներէ ժամանած:

Յուլիս 2019ին, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հրահրով, Հայաստան համախմբուած էին սփիւռքահայ ուսուցիչներ, մայրենի հոգի վրայ թարմացնելու իրենց գիտելիքները, ներշնչուելու հայրենիքով եւ լիցքաւորուած գիտելիքներով ու նոր փորձառութիւններով՝ որպէս հայրենի դեսպաններ վերադառնալու եւ նոր թափով շարունակելու իրենց սուրբ առաքելութիւնը:

Դասընթացի մեկնարկը տեղի ունեցաւ Յուլիս 1 2019 ի առաւօտեան, Խաչատուր Աբովեանի անուան Մանկավարժական համալսարանի սրահը, ներկայ էին կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանը, Սփիւռքի աշխատանքներու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սիւնանեան, պետական յարգելի անձնաւորութիւններ, Խաչատուր Աբովեանի անուան Մանկավարժական համալսարանի նախագահ Փրոֆ. Ռուբէն Միրզախանեան, դասախօսներ, փրոֆեսորներ, հիւրեր եւ սփիւռքէն հասած ուսուցիչներ. Տեղի ունեցան պաշտօնական խօսքեր, բարի գալուստի եւ ընդհանրապէս խօսուեցաւ սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստութեան ծրագրի, անոր հետապնդած նպատակներուն նաեւ ուսումնական ոլորտի հետ կապակցաբար հարցերու եւ սփիւռք հայրենիք փոխ յարաբերութեան մասին տրուեցան բացատրութիւններ, որմէ ետք ընթացք առաւ այս հրաշալի ծրագիրը:

Տարիներու վաստակ ունեցող հայ ուսուցիչներ վերադարձած էին աշակերտական գրասեղաններուն եւ պահ մը ուսուցչութիւնը ձգած անգամ մը եւս կ'աշակերտէին յարգարժան եւ արժէքաւոր դասախօսներու՝ վերանորոգելով իրենց գիտելիքները, կիզակէտ ունենալով իրենց աշակերտները եւ երբեք չմոռնալով, որ ազգի մը ապագան իր դաստիարակներու պատասխանատուութիւնն է:

Հաճելի էր 20 օր եւ 210 ժամ խտացուած դասընթացքը, ուսու-

ցիչները բաժնուած էին չորս խումբերու ըստ իրենց դասաւանդած դասարաններուն՝ Մանկապարտէզ, միօրեայ, նախակրթարան եւ գրականութիւն, առաւել հինգերորդ խումբը՝ արուեստի մասնագիտութեամբ. Իւրաքանչիւր խումբ ունէր իր յատուկ դասաւանդութեան, որոնք այլազան էին, մանկավարժական եւ դասաւանդման արդիական մեթոտներու եւ դրութիւններու կողքին կային նաեւ հոգեբանական, կրօնական, ներառական, գրական եւ երաժշտական նիւթեր, նաեւ գործնական աշխատանքներ՝ պար ու երգ, գիր ու գոյն եւ ճատրակ: Դասընթացքը կազմակերպուած էր մեծ բժախնդրութեամբ եւ կը գործադրուէր անխափան եւ անթերի. առաւօտեան ժամը 9ին մինչեւ 3 պալ անպայման հանդիպում մը նիւթերու հետ առնչուող կեդրոնի մը, նախարարութեան մը, գրողներու միութեան կամ հրատարակչատան մը հետ, առաւել յայտագիրը կը պարունակէր արտադասարանային այցելութիւններ՝ մատենադարան, թանգարաններ, տուն թանգարաններ, ուր մեր միտքն ու հոգին կը հարստանար մինչ մեր հպարտութեան զգացումը երբեմն մեզ լալու



չափ կը յուզէր, տակաւին կարգ մը երեկոներ առիթ ունեցանք վայելելու հայ մշակույթի գլուխ գործոցները, ներկայ գտնուելով թատերգութիւններու, Երգի պարի համոյթի, Հայ Մշակույթի գոհարներու ներկայացումներուն, սքանչելի կատարողութեամբը հայ տաղանդներու, մէկ խօսքով հիացած էի, ես ինձի հարց կուտայի՝ «Կարելի՞ է այսպիսի հրաշք երկիր մը նուաճել...»: Եւ տակաւին առօրեայ դասանիւթերու կողքին ունէինք երեք շաբաթավերջեր, որոնք ծրագր-

ուած էին հեռաւոր շրջաններ այցելելու, ինչպէս Սեւան իր իշխանով, Դիլիջան իր Հաղարծինով, Նորավանք Տաթեւ իր աշխարհի ամենաերկար ճոպանուղիով, Օշականի ամենասուրբ Գերեզմանը Մաշտոցի, ուր ուսուցիչներս առիթ ունեցանք խոնարհելու սրբագոյն սուրբին՝ Մաշտոցի շիրիմին իր ստեղծած 36 մշակույթի զինուորները փառաբանելով, նոյն ձեւով նաեւ ուսուցիչները առիթ ունեցան Մխիթար Գօշի մօտ պահ մը խորհրդածելու. ծրագրողները արդարօ-



րէն կազմակերպած էին Լորիի Դսեղ գիւղի այցելութիւնը, որպէսզի ուսուցիչներս մեր անսահման յարգանքն ու հաւատարմութիւնը մատուցենք 150 ամեայ Ամենայն Հայոց Բանաստեղծ՝ անմահ Թումանեանին. խումբը տունը այցելելով անգամ մը եւս առիթ ունեցաւ մանկանայրու «Շունն ու Կատու»ով, յուզուելու «Գիգոր»ով եւ խնդալու «Քաջ Նազար»ով, գոտեպիտուելու «Առիւծ մ'հեր»ով եւ ապրելու «Անուշ»ով, Թումանեանի պարգութեան մէջ զգալու անոր մեծութիւնը:

Դասաւանդութիւնները սկսած էին Միծեռնակաբերդ այցելութեամբ, ուր ուսուցիչներս անգամ մը եւս խոնարհեցանք մեր ինքնութիւնն ու արժանապատուութիւնը խորհրդանշող հայ նահատակներու

պէս հայերէնաւանդ ուսուցիչը ոչ միայն գիտելիք պէտք է փոխանցէ աշակերտներուն այլ գայն ներշնչէ հայրենասիրութեամբ փոխանցէ հայրենիքի սպրուհը եւ հայ ըլլալու հպարտութիւնը ներարկէ:

Յուլիս ամսուան մենք 61 ուսուցիչներս որքան որ մանկավարժական արդի մեթոտներ ընկալեցինք մեր գիտելիքները այդ ուղղութեամբ ամրապնդեցինք, նաեւ նոյն չափով եւ աւելի ուժգնութեամբ դասընթացքներու զուգահեռ տեսանք մեր փառապանծ պատ-

մութիւնը, հաղորդուեցանք մեր մշակույթով, շնչեցինք մեր հնաբոյր եկեղեցիներու մէջ տակաւին համեցող խունկն ու կնդրուկը, հոն իւրաքանչիւր քար ինքնին պատմութիւն էր, որ մեզ լիցքաւորեց, ներշնչեց՝ որպէսզի մենք այդ աւելի չը ներարկենք մեր սփիւռքահայ իւրաքանչիւր աշակերտի, եւ օտար հոգի վրայ գայն ձեւաւորենք հայօրէն մտածող, հայութեամբ ապրող եւ հայրենիքի սիրով աւելուն հայրդիներ:

Ուսուցիչներս վերջին օրը գոհունակութեամբ ստացանք նախարարութեան կողմէ վաւերացուած մեր վկայագրերը եւ մեկնեցանք մեր շրջանները մենք մեզ զգալով «Աբովեանականներ»:

Մենք մեկնեցանք մեր սրտերուն մէջ ունենալով երախտագիտութեան խոր զգացում հանդէպ կրթական նախարարութեան, Սփիւռքի գրասենեակի գործակատարներուն, Խ. Աբովեանի անուան Մանկավարժական համալսարանի նախագահ Փրոֆ. Ռուբեն Միրզախանեանի, գրականութեան բաժնի տնօրէն եւ վերապատրաստութեան ծրագրի պատասխանատու, դասախօս փրոֆ. Սուրէն Դանիէլեանին, դասախօս Քնարիկ Աբրահամեանին, ծրագրող եւ ծրագրին մօտէն հետեւող Թամարա Զալինեանի, բոլոր դասախօսներուն անխտիր եւ օգնականներ՝ Գարունա Երանոսեան, Նելլի Թադէոսեանի, Վեհանուշ Մուրադեան, երբեք պիտի չմոռնանք ձեր փափկանկատ, բժախնդիր, ազնիւ եւ յարգանք վերաբերմունքը մենք ձեզի շատ սիրեցինք:

Ես եւ 60 ուսուցիչներ աշխարհի չորս ծագերէն համախմբուած հայրենիքի մէջ նոյն մտահոգութիւններու շուրջ, բաժնելով նոյն յոյզերն ու յոյսերը ունենալով նոյն երազը, մենք հետզհետէ մտերմացանք իւրաքանչիւր վայրկեան եւ իւրաքանչիւր դասանիւթ, նոյնիսկ իւրաքանչիւր սրճադաղար մօտեցուց, մտերմացուց ու միաձուլեց մեզ մէկ նպատակի շուրջ, բոլորի կիզակէտը մէկ էր հայրենիքը փո-

անշէջ եւ անմոռաց յիշատակին առաջ, անգամ մը եւս նորոգեցինք մեր ուխտը շարունակելու մեր սրբազան առաքելութիւնը հայապահպանման ջահը լուսաւոր եւ պայծառ պահելով՝ փոխանցելու չաջորդ սերունդներուն: Նոյն խոստումը կրկնուեցաւ վերջին կիրակի այցելութեամբ մեր գոյատեւման տարբեր գագաթի մը՝ էջմիածին եւ անոր վեհին՝ Գարեգին Ամենայն Հայոց կաթողիկոսին, ուր մեր այցելութիւնները իր լրումին հասան:

Սփիւռքի ուսուցիչը յատկա-

Առաւօտեան Քիչ եւ Գայթակղութիւնները. Պաճառներ Արեւածագէն Առաջ Արթնալու Համար

Այս պատճառները հաճելի պիտի թուի ձեզի, յատկապէս եթէ դուք կրնաք կազմակերպել ձեր աշխատանքային օրը:

Բուերու եւ արտոյտներու պայքարը այնքան կրքոտ է, որ քան մտակերներուն ու բուսակերներունը, բայց երբեմն նոյնպէս շատ դաժան է: Արտոյտները կ'ըսեն, որ արեւածագը լաւագոյն տարբերակն է նոր բան սկսելու համար, իսկ բուերը վստահ են, որ միայն գիշերուան խաղաղութիւնը կը բացայայտէ ամբողջ ստեղծագործական ուժը: Ոչ ոք յստակ կրնայ ըսել, թէ ով է ճիշդ, բայց փորձենք առանձնացնել արտոյտներու ներկայացուցած պատճառաբանութիւնները, թէ ինչու պէտք արթննալ արեւածագէն առաջ:

1) Առաւօտեան դիւրին է կայացնել բարդ որոշումները- Ըստ հոգեբաններու, կամ քի ուժը, ինչպէս մեր մկաններուն ուժը, ունի որոշ վերջնական պահուստ: Օրուան ընթացքին անիկա աստիճանաբար կը սպառի, իսկ երեկոյեան, մեզմէ շատերը բացարձակապէս չեն ըլլար այնպիսի վճռական վիճակի մէջ, ինչպէս էին առաւօտեան: Այսինքն, եթէ ստիպուած էք կատարել որեւէ բարդ, տհաճ, ծանձրալի խնդիր, ուստի պէտք է անիկա ընել առաւօտեան, քանի որ երեկոյեան պիտի ունենաք հարիւրաւոր եւ հազարաւոր պատճառներ զայն յետաձգելու կամ չեղելու յայտարարելու համար:

2) Վաղ առաւօտեան քիչ է ձանձրոյթը- Եթէ դուք կրնաք սկսիլ ձեր օրը իսկապէս կանուխ, նոյնիսկ այնքան կանուխ, մինչեւ ամբողջ փողքը կը սկսի իր խենթ մրցակցի, պիտի տեսնէք, որ կը գտնուիք կախարդական քնացած թագաւորութեան մէջ: Դատարկ փողոցներ եւ զբօսայգիներ, խճողումներ եւ երկար շարքի սպասողներ չկան, հեռաձայնողներ չկան եւ յետագայ հանդիպման 501-րդ չիշեցումը նոյնպէս չկայ:

Աշխարհը դեռ քնացած է եւ ձեզի կու տայ քանի մը թանկարժէք ժամ, ուր դուք կրնաք որեւէ

բան ընել: Մի կորսնցնէք այս կախարդական ժամանակը:

3) Առաւօտեան քիչ են գայթակղութիւնները- Առաւօտ կանուխ կ'արթննաք եւ կը տեսնէք, որ հասարակական ցանցերուն վրայ կայ ընդամէնը 3 ծանուցում, ելփոսթի միջոցով ոչ ոք նամակներ ուղարկած է ձեզի եւ անգամ սարսափելի նորութիւնները դեռ չեն անհանգստացներ: Առաւօտեան դուք չէք կրնար շեղիլ իրական կեանքէն, անգամ եթէ շատ ուզէք: Ճիշդ ժամանակն է սեփական գործերով, կամ, վերջապէս, սեփական մարմնով զբաղելու համար:

4) Յագեցած առաւօտը կը փրկէ ողջ օրը- Եթէ վաղ առաւօտեան կարենաք կատարել ձեր առաջադրանքներէն գոնէ մէկը, ուստի դիւրութեամբ պիտի կատարէք նաեւ միւսները: Նաեւ, երեկոյեան պիտի ունենաք ազատ ժամանակ:

Եթէ սկսիք աշխատիլ կէսօրին՝ ձեր ամբողջ օրը պիտի ընթանայ թոհուբոհի մէջ: Հաւանաբար, պիտի կատարէք քիչ առաջադրանքներ, պիտի չհանգստանաք եւ ուշ պիտի քնանաք:

5) Առաւօտեան ցած է ճնշումը- Եթէ անհրաժեշտ է ճնշում մակերեսին հետ, որ կ'արտացոլէ արեւի առաջին ճառագայթները: Այս տրամադրութեամբ դիւրին է մտախոհութիւն ընել, զբաղիլ երկայով եւ կեդրոնանալ գիրքեր ընթերցելու վրայ:

Միանգամայն այլ պատկեր պիտի ըլլայ, եթէ դուք այդ նոյն գործողութիւնները կատարէք երեկոյեան կամ աշխատանքային ընդմիջումներուն ժամանակ:

6) Դուք հնարաւորութիւն պիտի ունենաք հանգստանալու ցերեկը- Եթէ շատ կանուխ արթննաք եւ կատարէք ձեր բոլոր գործերը, ուստի կէսօրէ ետք պիտի ունենաք ազատ ժամանակ հանգստանալու համար: Իսկ ի՞նչը կրնայ աւելի հաճելի ըլլալ, քան համեղ ճաշէն ետք մաքուր խղճով քնանալն ու քիչ մը հանգստանալը:

համար:

1) Գրգռուածութեան չպատասխանել գրգռուածութեամբ. Դիւրին է պատասխանել նոյն կերպով եւ դժուար է մնալ բարեկիրթ: Բայց, եթէ դուք ջանք գործադրէք, հետեւաբար նոյնիսկ կրնաք բարութիւն տեսնել չար մարդու մէջ:

2) Հարցուցէք դուք ձեզի, չէ՞ք փոխանցեր արդեօք ձեր բացասական տրամադրութիւնը ուրիշներուն. Այլ խօսքով, հաւանաբար դուք վատ տրամադրութիւն ունիք, եթէ այդպէս է, կողքի մարդուն համար գոյութիւն ունի անմեղութեան կանխավարկած:

3) Չչարաշահել փորձելով ուրախացնել մարդը. Եթէ չարաշահէք՝ կրնաք մերժողական վերաբերմունքի արժանանալ կամ, առնուազն, կասկածներ առաջացնել ձեր իրական նպատակներուն վերաբերեալ:

Շար.ը էջ 17

Ստքեր Վինսենթ Վան Գոգի Նամակներէն Եթէ կ'ուզես որեւէ բան ընել, մի վախճար բան մը սխալ ընելէն, մի մտահոգուիր, որ սխալներ կը գործես

Վինսենթ Վան Գոգ (1853-1890), հոլանտացի ականաւոր նկարիչ-փոսթիմփրեստիստ, որուն արուեստը հսկայական ազդեցութիւն ունեցաւ 20-րդ դարու գեղանկարչութեան վրայ:

Անոր կտաւներէն են «Արեւածաղիկները», «Աստղային Գիշերը» եւ շատ այլ հիանալի գործեր:

Մարդոց մեծ մասը Վինսենթ Վան Գոգը գիտէ իբրեւ խելագար, որ խելացնորութեան պոսթիման պահուն կտրեց իր ականջը: Սակայն մեծ գեղանկարիչին ներաշխարհը աւելի լաւ հասկնալու համար՝ բաւական է կարդալ անոր նամակները՝ ուղղուած մօտիկ ընկերներուն եւ եղբօր: Անոնց միջոցով ան կը ներկայանայ իբրեւ խորապէս խոցելի ու զգայուն մարդ, որ փիլիսոփայական տոկոսութեամբ տարաւ իր վրայ թափուած բոլոր անյաջողութիւնները:

1) Պէտք է սրտին չափազանց մօտ ընդունիլ սեփական թերութիւնները, քանի որ այն մարդը, որ թերութիւն չունի, ամէն պարագայի կը տառապի անոր բացակայութենէն, իսկ ան, որ կ'ենթադրէ, թէ հասած է կատարել իմաստութեան, լաւ կ'ըլլայ, որ կրկին չիմարանայ:

2) Եթէ կ'ուզես որեւէ բան ընել, մի վախճար բան մը սխալ ընելէն, մի մտահոգուիր, որ սխալներ պիտի գործես: Շատեր կը կարծեն, թէ իրենք լաւ պիտի դառնան, եթէ ոչ մէկ վատ բան ընեն:

3) Գիրքերը միայն գրական ողջ ստեղծագործութիւնները չեն, այլ նաեւ խիղճ, գիտակցութիւն եւ արուեստ:

4) Գիրքեր կարդալով, ինչպէս նաեւ կտաւներ դիտելով կարելի է կասկածիլ եւ տատանուիլ: Պէտք է դուք քու վրայ վստահ ըլլաս ու հիասքանչ համարես այն, ինչ իսկապէս հիասքանչ է:

5) Իմ կարծիքով, ես յաճախ, թէեւ ոչ ամէն օր, հեքիաթային հարստութեան տէր կ'ըլլամ՝ ոչ դրամով, այլ անով, որ իմ աշխատանքի մէջ այնպիսի բան կը յայտնաբերեմ, ինչին կրնամ նուիրել սիրտս ու հոգիս, ինչը կ'ոգեշնչէ գիտ ու կեանքիս իմաստ կը հաղորդէ:


6) Իրապէս գեղարուեստական բան, քան մարդոց սիրելը, չկայ:

7) Ես, նրականաբար, միշտ ալ գիտցած եմ, որ կարելի է կոտորել ձեռքը կամ ոտքը ու յետոյ կազդուրուիլ, սակայն ինծի համար անյայտ էր, որ կարելի է հոգեպէս կոտորուիլ ու յետոյ այնուամենայնիւ առողջանալ:

Առողջապահութիւն Կերամշակուած Ուտելիքի Վտանգը

ԱՄՆ-ի «Նորթուեսթըրն» համալսարանին մէջ խումբ մը հետազոտողներ յայտնաբերած են, որ Արեւմուտքի մանաւանդ ԱՄՆ-ի բնակչութեան մեծամասնութեան առողջութիւնը վտանգուած է շատ վերամշակուած (ultra processed) ուտելիքի օգտագործումին պատճառով:

Ըստ այս հետազոտութեան, ԱՄՆ-ի կամ որեւէ այլ երկրի բնակչութեան գիրութեան ամենամեծ պատճառը այս շատ վերամշակուած ուտելիքի օգտագործումն է:



8) Չարժէ լ զղջումներուն ու թեւաթափ ըլլալ: Այդպէս շատ հեռու չես երթար: Կարեւոր է մէկ բան՝ առաջ երթալ:

9) Մենք պէտք է պատրանքներ ունենանք մենք մեզի վերաբերեալ ու պատրաստ պէտք է ըլլանք, որ մեզ կրնան հասկնալ, ատել ու վարկաբեկել: Այնուամենայնիւ, պէտք է պահպանել խիղճախոթիւնն ու խանդավառութիւնը, նոյնիսկ եթէ գործերը աւելի վատ ընթանան, քան ներկայ պահուն:

10) Կը հաւատացնեմ ձեզի, որ հիւանդանոցին մէջ անցուցած իմ քանի մը օրերս շատ հետաքրքրական եղան. հաւանաբար պէտք է հիւանդներէն ապրիլ սորվիլ:

11) Պատերազմը, այնուամենայնիւ, ոչինչ կը բերէ, բացի վշտէն ու կործանումէն այն պարագային, երբ գեղանկարչութիւնը երբեմն իրական ցանք կը ներկայացնէ, հակառակ անոր, որ բերքը, ի հարկէ, միշտ չէ որ նկարիչին բաժին կը հասնի:

12) Ես կը մտածեմ, որ որքան շատ մարդը կը սիրէ, այնքան ուժեղ ան կ'ուզէ գործել. միայն իբրեւ զգացում մնացող սէրը ես երբեք իրական սէր չեմ անուաներ:

13) Երբ բանը կը հասնի գործի հուժեան, ես չեմ ամէնար իմ զգացումներէն եւ չեմ կարծիք խոստովանելէն, որ ես իմ սկզբունքներն ու կեանքի հաւատամքը ունեցող մարդ եմ:

14) Տխուր հեռանկար է՝ գիտակցիլ, որ կտաւներս հաւանաբար երբեք կրնան պահանջուած չըլլալ: Եթէ անոնք գոնէ իրենց ծախսերը փոխհատուցէին, ես ինծի կրնայի ըսել, որ դրամը ինծի երբեք չէ հետաքրքրած:

15) Միթէ՞ կեանքը մեզի տրուած չէ հարուստ հոգի ունենալու համար, անգամ եթէ անկէ տուժէ մեր արտաքինը:

է: Այս ուտելիքները, որոնց մեծ մասը կը բաղկանայ սուսփեյններէ, կը պարունակեն բարձր տոկոս ուժանիւթ, յագեցած իւղ (saturated fat), շաքար եւ աղ: Անոնց մեծ մասը ոչ-առողջապահական է:

Այս պարագային, արտադրող ընկերութիւնները պէտք է կրեն իրենց պատասխանատուութեան բաժինը, որովհետեւ իրենց արտադրած ուտելիքը պէտք է համապատասխանէ ընդունուած առողջապահական օրէնքներուն:

«Սայընս Տէյլի»

Լաւ Պիտի Ըլլար Եթէ Ամէն Մարդ Բարեկիրթ Ըլլար.

Ի՞նչպէս շփուիլ տհաճ մարդոց հետ

Երբ դուք կը գտնուիք իսկապէս լաւ մարդոց կողքին, ատիկա բնականաբար կը զգաք: Անոնք կը թուին թեթեւ եւ ջերմութիւն կը հաղորդեն իւրաքանչիւր իրավիճակի: Սակայն կան մարդիկ, որոնք լարուածութիւն կը ստեղծեն, եւ դուք կ'ուզէք արագօրէն ազատիլ անոնց ծանր, չերեւցող ճանկերէն:

Եթէ դուք բարիք կոպտութեան հետ, ի հարկէ դիւրին է պատասխանել նոյն կերպով, բայց դուք բարեկիրթ եւ հասկցող մարդ էք: Ի՞նչպէս վարուիլ, ի՞նչպէս շփուիլ տհաճ մարդոց հետ, մնալով բարեկիրթութեան սահմաններուն մէջ:

Բարեբախտաբար, հոգեբանները միշտ կը գտնեն եղանակը: Գոյութիւն ունի հիանալի որակ՝ գիշողականութիւն:

Անիկա կ'օգնէ մնալ բարեհամբույր եւ համեստ: Հոգեբանները կ'առաջարկեն չորս տարբերակ՝ այդպիսի մարդոց հետ շփուելու

ՄԱՐԶԱԿԱՆ

«Լիվերպուլ»-ն «Էնֆիլդ»-ում Յաղթեց «Արսենալ»-ին, Սալահը՝ Դուբլի Յեղինակ



Պրեմիեր լիգայի 3-րդ տուրում «Լիվերպուլ»-ը սեփական յարկի տակ խոշոր հաշուով յաղթեց «Արսենալ»-ին:

Առաջին խաղակեսի վերջնամասում հաշիւը բացեց ժոկէլ Մատիպը (41): Երկրորդ կեսում դուբլ ձեռակերպեց Մոհամեդ Սալահը (49' (11-մ.), 59'):

«Զինագործներ»-ին յաջողուեց ընդամենը մէկ գնդակ խփել: Իր անունը ցուցատախտակին վառեց Լուկաս Տորեյրան:

Յատկանշական է, որ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը փոխարինման դուբլ եկաւ 86-րդ րոպէին:

Այս հանդիպումից յետոյ մերսիսայդիցները 9 միաւորով գլխաւորում են մրցաշարային աղիւսակը, «Արսենալ»-ն ունի 6 միաւոր ու դեռեւս 2-րդ հորիզոնականում է:

Լա Լիգա. «Բարսելոնա»-ն Ջախջախեց «Բետիս»-ին, Գրիզմանը՝ Դուբլի հեղինակ

Սպանիայի առաջնութեան 2-րդ տուրում «Բարսելոնա»-ն «ամպ Նոու» մարզադաշտում հիւրընկալեց «Բետիս»-ին:

Հանդիպման հաշիւը 15-րդ րոպէին բացեց հիւրերի նորեկ Նաբիլ Ֆեկիրը:

Սակայն դա «Բետիս»-ի միակ կողմն էր Չախջախումից առաջ: Յետագայում կատալոնական ակումբի յարձակուող Անտուան Գրիզմանը իր հաշուին դուբլ գրանցեց: Դրանք ֆրանսացի ֆուտպոլիստի առաջին կոլերն էին «կապտանոնագոյններ»-ի կազմում:

Տանտէրերի 3-րդ կողմը խփեց Կարլես Պերեսը: Ապա «կապտանոնագոյններ»-ի 4-րդ կողմը խփեց ժորժի Ալբան: «Բարսա»-ի վերջին գնդակը Գրիզմանի փոխանցումից յետոյ խփեց փոխարինման դուբլ եկած Արտուրո Վիդալը: «Բետիս»-ը 79-րդ րոպէին միայն կարողացաւ կրճատել հաշիւը՝ այն դարձնելով 2:5:

Այս խաղից յետոյ էրնեստո վալվերդեի թիմը վաստակեց առաջին միաւորները մրցաշարում եւ զբաղեցնում է մրցաշարային աղիւսակի 9-րդ հորիզոնականը: «Բետիս»-ը վաստակած միաւոր չունի եւ եզրափակում է աղիւսակը:

Պոլ Պոզբան Սոցցանցում Յայտարարել է, Որ Շարունակելու է Պայքարել Ռասիսզմի Դրսելորումների Դեմ

«Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան Պոլ Պոզբան սոցցանցում յայտարարել է, որ շարունակելու է պայքարել ռասիսզմի դրսելորումների դէմ ու չի պատրաստուում տրուել դրանց ազդեցութեանը:



Յիշեցնենք, որ ֆրանսացի ֆուտպոլիստը սկսել է սոցցանցերում ռասիստական վիրաւորանքներ ստանալ այն բանից յետոյ, երբ չկարողացաւ իրացնել 11-մեթրանոցը ԱՊԼ-ի 2-րդ տուրի՝ «Վուլվերհեմփթոնի» հետ խաղում (1-1):

«Իմ նախնիներն ու իմ ծնողները տառապել են, որպէսզի իմ սերունդն այսօր ազատ լինի, կարողանայ աշխատել, երթեւեկել ատոբուսով, ֆուտպոլ խաղալ: Ռասիստական վիրաւորանքները տգիտութիւն են ու կարող են միայն աւելի ուժեղ դարձնել ինձ: Դա ինձ մոտիւացնում է, որ պայքարեմ յաջորդ սերնդի համար», - գրել է Պոզբան «Թվիթթերում»:

Լաւ Պիտի Ըլլար

Շարունակուած էջ 16-էն

4) Ընդունելի անխուսափելին, եթէ ատիկա, իրօք, անխուսափելի է. Դուք չէք կրնար փոխել ձեր

հակառակորդը, բայց կրնաք փոխել ձեր վերաբերմունքը: Եթէ դուք կառավարէք ձեզ, ուստի թող չէք տար դիմացիներն ձեզ հունէն հանել կամ փճացնել ձեր տրամադ-

»Արարատ-Արմենիան« Եւրոպայի Լիգայի Փլեյ-օֆֆի Խաղում Յաղթեց «Դիլդելանտ»-ին



Ֆուտպոլի Հայաստանի ախոյեան Երեւանի «Արարատ-Արմենիան» Եւրոպայի լիգայի խմբային փուլ մտնելու լուրը յատ ներկայացրեց:

Այսօր կայացած փլեյ-օֆֆի առաջին խաղում մեր թիմն իր յարկի տակ ընդունեց Լիւքսեմբուրգի ախոյեան «Դիլդելանտին»:

«Հանրապետական» մարզադաշտում կայացած հանդիպումն աւարտուեց վարդան Մինասեանի սաների յաղթանակով:

Նախ խաղի 22-րդ րոպէին հոլանդացի Մախլսոն Լիման առաջ մղեց տանտէրերին: Երկրորդ խաղակեսի 68-րդ րոպէին հիւրերի յարձակուող Դանիել Մինանին հաւասարեցրեց հաշիւը, սակայն մրցավարի կողմից աւելացուած ժամանակի 3-րդ րոպէին փոխարինման մտած Իլյա Անտոնովը երկրորդ անգամ գրաւեց լիւքսեմբուրգցիների դարպասը եւ յաղթանակ բերեց արարատցիներին՝ 2:1:

Այդպիսով, «Արարատ-Արմենիային» լաւ հնարաւորութիւն ստացաւ մտնելու Եւրոպայի լիգայի խմբային փուլ: Պատասխան հանդիպումը տեղի կ'ունենայ Օգոստոսի 29-ին, «Դիլդելանտի» դաշտում, որտեղ մեր թիմին ձեռնտու է բոլոր արդիւնքները, բացի 0:1 եւ աւելի խոշոր հաշուով պարտութիւնը:

Մարգարիտա Գասպարեանը Յաղթանակով է Մեկնարկել US Open-ում

Ռուսաստանը ներկայացնող թենիսիստուհի Մարգարիտա Գասպարեանն ԱՄՆ-ի բաց առաջնութեան առաջին շրջանում մրցել է Պրինցիլ Հոնի հետ:



7:6, (7:4), 6:4 հաշուով Գասպարեանը յաղթանակ է տարել 1 ժամ 36 րոպէ տեւած պայքարում:

ԱՄՆ-ի բաց առաջնութեան երկրորդ շրջանում Մարգարիտա Գասպարեանի մրցակիցը կը լինի բրիտանացի Յոնանա Կոնտան:

Բարսելոնայում կանգնեցուել է Կրոյֆի արձանը

Կատալոնիայի մայրաքաղաք Բարսելոնայում Օգոստոսի 26-ին կանգնեցուել է հոլանդացի լեգենդար ֆուտպոլիստ Յոհան Կրոյֆի արձանը:

3.5 մեթր բարձրութեամբ արձանը գտնուում է «Բարսելոնայի» «Կամպ Նոու» ստադիոնի հարեւանութեամբ:

Յոհան Կրոյֆը «Բարսելոնայում» հանդէս է եկել 1973-1978 թուականներին: 1988-1996 թուականներին հոլանտական ֆուտպոլի լեգենդը զբաղեցրել է «Բարսելոնայի» գլխաւոր մարզիչի պաշտօնը:

«Մանչեսթեր Յունայթեդը» Դադարեցրել է Բանակցութիւններն «Ինտերի» Դեմ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» եւ Չիլիի ազգային հաւաքականի յարձակուող Ալեքսիս Մանչեսի ապագան շարունակում է մնալ մշուշոտ:

The Guardian-ի հաղորդմամբ՝ մանչեսթերեան ակումբի ղեկավարութիւնը դադարեցրել է բանակցութիւններն «Ինտերի» հետ այն բանից յետոյ, երբ վնասուածք է ստացել թիմի ֆրանսացի յարձակվող Անտոնի Մարտիալը: Այդբիւրը նշում է, որ Մարտիալի երկարաժամկէտ բացակայութեան դէպքում Ուլե-Գունար Սուլշերը դէմ կը լինի Ալեքսիս Մանչեսի տեղափոխութեանը:

Աւելի վաղ հաղորդուած էր, որ Մանչեսն ընթացիկ մրցաշրջանը վարձակալութեամբ կ'անցկացնի «Ինտերում»: Մրցաշրջանի աւարտին իտալական ակումբը հնարաւորութիւն կ'ունենայ 15 միլիոն եւրոյի դիմաց ձեռք բերել 30-ամեայ յարձակիճողի տրանսֆերային իրաճուանքը:

րութիւնը:

Հիանալի պիտի ըլլար, եթէ բոլորս ապրէինք խաղաղութեան մէջ ու շուրջբոլորը ըլլային բարեկիրթ մարդիկ, բայց մեր շրջապա-

տին մէջ միշտ կան այնպիսիները, որոնք հաճելի չեն մեզի համար: Կարեւորը պէտք է կրնալ ճիշդ շփուել այդպիսի մարդոց հետ՝ մնալով բարեկիրթ եւ վեհանձն:

ՄԱՐԱԶԴ



ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
Ծնեալ Հայկալ 1960 -2019

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մե ր սիրեցեալ ամուսնոյն, հօր, եւ հարազատին որ պատահեցաւ Օգոստոս 23-2019-ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկագորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ Օգոստոս 31, 2016-ին, կ.ա. ժամը 11-ին Սրբոց Ղեւոնդեանց տաճարին մէջ, Պրըպէնք, 3325 North Glenoaks Blvd. Burbank CA 91504, ապա թաղման կարգը տեղի պիտի ունենայ Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկին Սոնա Գաբրիէլեան
- Ձաւակները՝ Արմէն եւ Մեղրի Գաբրիէլեան
- Այրի Տիկ Մովսիկ Գաբրիէլեան եւ զաւակունք (Սիտնի-Աւստրալիա) Եղբայրը՝ Տէր եւ Տիկ Գաբրիէլ եւ Յասմիկ Գաբրիէլեան եւ զաւակունք (Լիբանան)
- Այրի Տիկ Ռիթա Գաբրիէլեան եւ զաւակունք (Սիտնի-Աւստրալիա) Հօրեղբօր կինը Այրի Տիկին Մարի Գաբրիէլեան եւ զաւակունք (Հայաստան)
- Տէր եւ Տիկ. Պերճ Մսրըլեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Գրիգոր Մսրըլեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Չէմպէրճեան (Հայաստան)
- Տէր եւ Տիկ. Վիգէն Չէմպէրճեան (Հայաստան)
- Ձոքանչը՝ Այրի Տիկ. Ալիս Մարտիկեան (Օհայօ)
- Աներորդին՝ Տէր եւ Տիկ. Ճամիլ Մարտիկեան եւ զաւակունք (Հայկալ)
- Աներորդին՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր Մարտիկեան եւ զաւակունք (Նիու ձըրզի)
- Քենին՝ Տէր եւ Տիկ. Արա Բունարճեան եւ զաւակունք (Օհայօ)
- Օրդ. Ջարուհի Մարտիկեան
- Այրի Տիկ. Գայեանէ Մարտիկեան եւ զաւակունք (Ֆիլադելֆիա)
- Այրի Տիկ. Էլիզապէթ Մարտիկեան եւ զաւակունք (Հայաստան)
- Տիար Հրաչ Արզումանեան եւ զաւակունք (Ֆիլադելֆիա)
- Տէր եւ Տիկ. Հրայր Արըճեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Պէն եւ Սոնա Նոյզ
- Տիար Յարութ Արըճեան եւ զաւակունք
- Եւ համայն Գաբրիէլեան, Մարտիկեան, Արըճեան, Չէմպէրճեան, Արզումանեան, Ջարացեան, Պարսումեան, Օհանեան, Նոյզ, Գործեան, Գասպարեան, Նալպանտեան, Պալպանեան, Պապայեան եւ Քէօրօլեան ընտանիքներն ու հարազատները:
- Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (A.E.B.U.):

ԸՆԿԵՐ ՍԵՎՈՒԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ ՄԱԻՐ

ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինը խոր ցաւով կը գուժէ իր կազմի անդամ՝ Ընկեր Սեպուհ Գաբրիէլեանի մահը, որ պատահեցաւ Օգոստոս 23-ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Ընկեր Գաբրիէլեան Հայկալէն մինչեւ Լոս Անճելըս ունեցած է կուսակցական եւ հասարակական բեղուն գործունէութիւն, ինչպէս նաեւ ծառայած է ՀՄՄ-ի մեծ ընտանիքին ներս:

Այս տխուր առթիւ մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալ ընկերոջ այրիին՝ Սոնային, զաւակներուն, ընտանեկան համայն պարագաներուն եւ մեր բոլոր ընկեր-ընկերուհիներուն:

ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմին


ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկին Սոնային, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. Արսէն Կիտուր մասնաճիւղի վարչութիւնն ու ընկեր-ընկերուհիները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկին Սոնային, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

ՄԱՐԱԶԴ



ՎԱՐՈՒԺԱՆ ԼԱԼԱԵԱՆ
(Ծնեալ՝ Օգոստոս 22, 1931, Թաւրիզ, Իրան)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք իմ սիրելի ամուսնոյն, երկու զաւակների հայր՝ Վարուժան Լալաեանի մահը, որ տեղի ունեցաւ երկարատեւ հիւանդութիւնից յետոյ:

Թաղման արարողութիւնը տեղի կ'ունենայ Ուրբաթ, Օգոստոս 30-ին, առաւօտեան ժամը 10.30-ին, Glendale Forest Lawn-ի Church of Reccessional եկեղեցու մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ
Կողակիցը՝ Ատել Լալաեան
- Ձաւակները՝ Հենրիկ Ռուբինա Լալայեան
- Հրայր եւ Մելինէ Լալայեան
- Թոռները՝ Քրիստոֆըր և Նիքըլա Լալայեաններ:
- Թաղման արարողութիւնից յետոյ հոգեճաշ կը մատուցուի Իրանահայ Միութեան սրահի մէջ (117 South Louise St., Glendale California 91204):
- Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները խնդրուած է կատարել Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ կարիքաւոր երեխաների ֆոնդին /Armenian American Orphans Disabled Children Fund.:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու Տիկնանց Օժանդակ Մարմինը իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկին Սոնային, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՍԵՊՈՒՀ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կիլիկեան Բարեսիրական Միութեան վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկին Սոնային, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

Ցեղասպանագիտութեան Մեծ Կորուստը

Շարունակուած էջ 8-էն

ստանամ:

«Քառասուն տարի ետք սա թրքերէնով իմ առաջին նամակագրութիւնն է»: Տատրեանէն եկած թրքերէն նամակը այս նախադասութիւնով կը սկսէր: Այսպէս մեկնարկեց մեր բազմամեայ բարեկամութիւնը: Սիրով մասնակցեցաւ աշխատանոցին եւ իր ելոյթը մեծ տպաւորութիւն գործեց: Մանաւանդ ընդգծեց թուրք մտաւորականի մը այս մասին անկողմնակալ ուսումնասիրութեան կարեւորութիւնը: Ինստիտուտը ընդունեց իմ առաջարկը: Այս աշխատանոցին համար պատրաստած նախագիծը հրատարակուեցաւ «Իլէթիշիմ» հրատարակատունէն, «Թուրք ազգային ինքնութիւնը եւ հայկական խնդիրը» խորագիրով: Սա այս նիւթի մասին իմ առաջին գիրքն էր:

Տոբթորականս պատրաստելու ժամանակ ալ Տատրեան իր օգնութիւնը երբեք չի նայեց: Այդ տարիներուն համացանցի, հետեւաբար էլ նամակի գրութիւնը չկար: Միշտ թղթակցեցանք ֆաքսի միջոցաւ: Մեծ համբերութեամբ պատասխանեց իմ անվերջանալի հարցումներս:

Ամերիկա երթալս ալ իր միջոցաւ եղաւ: 1999ին ինստիտուտը մերժեց իմ աշխատութիւններս հովանաւորել: Ընտանիք մը ունէի, որուն ապրուստի պատասխանատուութիւնը իմ վրայ էր: Տատրեանի միջնորդութիւնով Միշիգընի Տիւրպորն համալսարանի հայկական հետազոտութիւններու կեդրոնը զիս հրաւիրեց եւ ես կրկին անգամ ցեղասպանութեան նիւթի շուրջ աշխատելու առիթը գտայ:

Շատ կը կարօտնար իսթանպուլը, մանաւանդ Սկիւտարը: Կը վախնար թուրքիա գալէ, «հոն ինձ կը սպաննեն» կ'ըսէր:

Յաճախ կը քննադատուէր թրքատեացութեամբ: Բայց թուրքերու հետ հանդիպելուն, յատկապէս ալ անոնց հետ թրքերէն խօսելու պահուն աչքերուն մէջ փայլատակող ուրախութիւնը նշմարած եմ:

Մէկ բան շատ յստակ է: Իմ կեանքի կարեւոր անկիւնադարձերուն եթէ իր օգնութիւնը վայելած չըլլայի, չէի ըլլար այն ինչ, որ այսօր եմ: Ոչ կրնամ մոռնալ իր գորակցութիւնը, ոչ ալ կրնամ հատուցել: Յարգանքով կը խոնարհիմ իր յիշատակին առջեւ:

«ԱԿՕՍ»

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՅՈՎՍԷՓ (ՃՕ) ՄՈՒԹԱՅԵԱՆ

Յովսէփ (ՃՕ) Մուժաֆեանի մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2019-ին, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներն են՝ Այրին՝ Լիսա Մուժաֆեան, Զաւակները՝ Ժոզէֆ եւ Լիանա Մուժաֆեաններ, Մայրը՝ Ազնիւ Մուժաֆեան, Եղբայրը՝ Մինաս Մուժաֆեան, Քոյրը՝ Սոնա Քրքոչեան եւ զաւակուք (Արիզոնա) Քոյրը՝ Անահիտ Պէրպէրեան եւ զաւակուք (Լիբանան) Հարսքոյրը՝ Ալիս Մուժաֆեան (Քանատա) Հօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Ազատուհի Մուժաֆեաններ (Լուիզիանա) Հօրաքոյրը՝ Մարի Գալթագճեան եւ զաւակուք (Լուիզիանա) Հօրաքոյրը՝ Զապէլ Սարաֆեան եւ զաւակուք (Լիբանան) Մօրաքոյրը՝ Մարիամ Գազգեան եւ զաւակուք Քեռին՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Մայտա Ռէճէպեան (Քանատա) եւ համայն Մուժաֆեան, Արապաճեան, Ռէճէպեան, Տէօշօղլեան, Քրքոչեան, Պէրպէրեան, Գազգեան, Գալթագճեան, Սարաֆեան, Թօքճեան, Եսահեան, Ժամկոչեան եւ Արվանիթօփուլոս ընտանիքները:

ՅԱՄԱԿՑԱԿԱՆ

ՅՈՎՍԷՓ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Լուիզիանայէն Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Մարի Մուժաֆեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Երաժշտագէտ Եւ Ազնուգական Գրիգոր Փիտէճեան

Շարունակուած էջ 14-էն

ասդին: Երաժշտութիւնը մեր մէջ իր դասական նկարագրէն գրեթէ պարպուած է, եւ սիւալ պիտի չըլլայ երբ հաստատենք որ Գրիգոր Փիտէճեանի մահուամբ կ'աւարտի նաեւ մեր իսկական հարագատ երաժշտութիւնը որուն յաջորդողներ չեն երեւիր հեռաւոր հորիզոնին վրայ, գոնէ առ այժմ: Իր բարձրագոյն ազնուութեամբ եւ խոնարհութեամբ Գրիգոր Փիտէճեան կնիքը դրաւ հայ գեղարուեստի սոյն բնագաւառին վրայ արժանաւորապէս, առանց փողի եւ թմբուկի:

Իր ազնուութեան մէկ արտայայտութիւնը վերջերս յայտնեց իր պատանեկան նոյն ընկերոջ նկատմամբ, երբ Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանի Հայրապետական Կոնդակով շքանշան կը յանձնուէր յատուկ երեկոյ մը Արեւմտեան Թեմին մէջ: Հոն կը կարդային գնահատանքի ջերմ արտայայտութիւններով լի յատուկ նամակ մը՝ ձեռագիր գրուած երաժշտագէտ եւ պատուակալ Փրոֆ. Գրիգոր Փիտէճեանի կողմէ:

Թող ներկայ գրութիւնը մեր շարականներու բառերով «արեգակնակերպ ճառագայթներով» լուսաւորէ իր հոգին:

Ես ալ Արովեանական Դարձայ

Շարունակուած էջ 15-էն

խաղրել իրենց դասարաններէն ներս, ներշնչել աշակերտները հայրենասիրութեամբ եւ զօրացնել անոնց մէջ հայկական պատկանելիութեան գիտակցութիւնը:

Այսպիսով Տարիներու երազս իրականացած էր, հոգ չէ թէ մէկ ամիսով, ես արժանացած էի հայրենիքի մէջ ուսանելու փառքին,

վայելելու պետական հիւրընկալութիւնն ու հոգատարութիւնը, նոյնիսկ վայելելու արեւելահայերէնի կողքին արեւմտահայերէնը ըմբոշանելով յատուկ Ֆրանսայէն ժամանած Փրոֆ. Հիլտա Գալֆանեանն ու մեր շատ սիրելի Պրն. Յակոբ Զոլաքեանը:

Միամսեայ դասընթացքի աւարտին ես ինքզինքս Ափովեանական կը զգամ:

ՄԱՐԱԶԴ



ՎԱՐՈՒԺՆԱԿ ՄԱՏԱՂՃԵԱՆ-ԳԱԶԱՆՃԵԱՆ

Սրտի դառն կատիծով կը գուժենք մեր եղբօր, կողակիցին, մեծ մօր, մօրաքրոջ եւ հարազատին՝ Վարուժնակ Գազանճեանի անակնկալ մահը որ պատահեցաւ Կիրակի Յուլիս 14, 2019-ին, Ֆրանսա: Յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնները տեղի ունեցան Փարիզի ազգային գերեզմանատան մէջ Ուրբաթ, Յուլիս 19ին, 2019:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Զոհրայ Գազանճեան Փարիզ, Զաւակները՝ Տոքթ. Վիգէն Գազանճեան եւ զաւակուք Փարիզ, Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Գազանճեան եւ զաւակուք Փարիզ, Տաքերը՝ Տէր եւ Տիկ. Տոքթ. Արշակ Գազանճեան եւ զաւակուք Տէր եւ Տիկ. Անդրանիկ Գազանճեան եւ զաւակուք Լիբանան, Այրի Տիկ. Անահիտ Գազանճեան եւ զաւակուք Տալը՝ Մարիթան Մանուկեան եւ զաւակուք Հայաստան, Մօրաքրոջ զաւակները՝ Տէր եւ Տիկ. Վաչէ Իմաստունեան եւ զաւակուք Լիբանան, Տէր եւ Տիկ. Շահէ Իմաստունեան եւ զաւակուք Լիբանան, Տիկ. Քաթիա Նօլ եւ զաւակուք Աւստրալիա եւ համայն Գազանճեան, Իմաստունեան, Նօլ եւ Մատաղճեան ընտանիքներն եւ հարազատները:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝ • Հայկական երգարաններ • Կիլիկիոյ պատմական գիրքեր • Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնով՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան

Vahe Atchabahian 2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104 Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text: Զօրացիւք Օժանդակենք Փրկենք www.syrianarmenianreliefund.org Syrian Armenian Relief Fund P.O. Box 1948 Glendale, CA 91209-1948



19-րդ ԱՄԵՐԿԻ ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊՍՏ ԲԱՅԱՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆԳԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՅ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ԿԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ARMENIAN AMERICAN ORPHANS DISABLED CHILDREN'S FUND

19th Annual telethon will be broadcasted live from Charter Spectrum's AABC (384) and High Vision (381)

19th ANNIVERSARY TELETHON

5:00 P.M. - 11:00 P.M.

ON SEPTEMBER 8, 2019

WWW.FOROURKIDS99.COM

818-239-6880 • 818-246-0125 HOVANES

NON - PROFIT AND CHARITABLE ORGANIZATION 501© 3 CHARITY ID#27-1381531

MAIN SPONSORS

GASKA ALLIANCE FOUNDATION	KRADJIAN Importing Co., Inc.	MR. GRIGOR AIVAZIAN MEMBER SOCIETIES OF ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND	TOWER PHARMACY	Raffi's Place GOURMET CUISINE
Normandy Pharmacy Hollywood & North Hollywood	ABALI	AYVAZIAN Realty Management	ALBERT & TERRY BEZJIAN	GLENDALE WEST PHARMACY AND MEDICAL SUPPLY
VAL-PAK THE POOL PROFESSIONAL'S CHOICE FOR QUALITY REPLACEMENT PARTS!	THE STEPANIAN LAW FIRM APC	Alice Navasargian	ARMEN & ALEK GHARABEKIAN	Vachik Stepanian Real Estate Broker
MOUSA LER MARKET - CATERING	BLACK JACK MARKETPLACE	MINAS VOSKANYAN, CPA	TAMARA	Universal Travel & Tours
YEREVAN PRINTING	WELLS FARGO	the Bicycle HOTEL CASINO	Raffi's Market	Sadaf FOODS

**WE
LOVE
YOU**



AGBU PASADENA-GLENDALE PRESENTS 5th Annual Armenian Fest

Friday, September 6

Youth Games & Parent Chill | 6:00 PM
Basketball Games | 6:00 PM
Food, Beer & Cocktails available at Bardez

Saturday, September 7

Youth Games & Movie Night | 10:00 AM
Basketball & Volleyball Games
Taco Truck - Coffee - Shopping

Sunday, September 8

Closing Ceremony & Comedy Night | 1:00 PM
Basketball Games - Closing Ceremony | 4:00 PM

**Kebab Comedy Show Including
Maz Jobrani, Ara Basil & Michael Passion**

For Comedy Show Tickets: www.showclix.com/event/kebabkometry

All Athletes, Scouts, and Community Welcome
Events will be held Indoors & Outdoors | Dress Accordingly
Free Lot Parking and Street Parking Available



AGBU Vatche & Tamar Manoukian Center
2495 E. Mountain St., Pasadena, CA 91104
Call 626-794-7942 for more info!

No
Entrance
Fee



Kebab Komedy



Maz Jobrani



Michael Passion



Ara Basil



Tickets: showclix.com/event/kebabkometry

Cost: \$40, \$50, \$60

Sunday, September 8, 2019

Cocktail Hour 6:30 pm | Showtime 7:30 pm

AGBU Vatche & Tamar Manoukian Performing Arts Center
2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

PLEASE NOTE: This is an 18+ event